



**CR
RC**



Այս հետազոտությունը իրականացվել է Եվրասիա հիմնադրամի ծրագիր հանդիսացող և Նյու Յորքի Կարնեգի Կորպորացիայի կողմից ֆինանսավորվող Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ (ՀՌ-ԿԿ) - Հայաստան կենտրոնի Հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

***ՀՀ մարզերի բնակչության բարեկեցության մակարդակի գնահատումը
բազմազործոնային ընդհանրական համաթվերի միջոցով***

Ներկայացված է՝ ***ՀՌ-ԿԿ-Հայաստան***

Ներկայացնող՝ ***Արմեն Քթոյան,
ՀՀ Կառավարման և տնտեսական
բարեփոխումների ինստիտուտ***

Դրամաշնորհի # **C05-7106**

e-mail. armen_ktoyan@mail.ru
phone (093) 331-995

Երևան, Հայաստան, 2006

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Աջանկանայի իմ երախտագիտությունն արտահայտել ծրագրի իրականացումն ապահոված աշխատանքային խմբի անդամներ Արտակ Մանուկյանին, Մոս Խաչիկյանին, Հայկ Շալունցին, ներկայացվող հետազոտության նախնական տարբերակները գրաքննության ենթարկած անձանց՝ կարևոր ու իմաստալից դիտողությունների և խորհուրդների համար, դրամաշնորհային ծրագրի հանձնաժողովի անդամներին, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների Հայաստանյան գրասենյակի ողջ անձնակազմին և, առհասարակ, ծրագրի իրականացմանն աջակցություն ցուցաբերած բոլոր անհատներին և կազմակերպություններին:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Յուրաքանչյուր երկրում հասարակության, դրա տարբեր շերտերի, ինչպես նաև առանձին տնային տնտեսությունների բարեկեցության մակարդակի գնահատումը, այն պայմանավորող հիմնական գործոնների բացահայտումը և կառավարումը տնտեսագիտության առանցքային և առավել բարդ հիմնախնդիրներից են, որոնց լուծումը պահանջում է բազմափուլային հետազոտական-վերլուծական աշխատանքների իրականացում՝ բնակչության բարեկեցության ընդգրկում և համապարփակ չափանիշի հաշվարկման մեթոդաբանության մշակումից մինչև անհրաժեշտ վիճակագրական տվյալների հավաքագրումն ու ընտրված չափանիշի գործնական գնահատումը:

Շատ դեպքերում նկարագրված խնդիրների լուծման բարդությունները շրջանցելու համար բարեկեցությունն արհեստականորեն նույնացվում է բնակչության դրամական եկամուտների մեծության հետ, այսինքն տվյալ պարագայում գործում է հետևյալ տրամաբանությունը. բարձր եկամուտը նշանակում է մեծ թվով պահանջմունքների բավարարման հնարավորություն, ինչն էլ իր հերթին ենթադրում է բարեկեցության բարձր մակարդակ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս մոտեցումը անլիարժեք է ու սահմանափակ, չի ներառում բարեկեցությունը պայմանավորող շատ կարևորագույն ցուցանիշներ, այդ իսկ պատճառով դրա հիման վրա իրականացված վերլուծությունները, միջերկրային կամ ներերկրային համեմատությունները իրենցից ներկայացնում են իրականության շատ մոտավոր, էականորեն ձևախախտված արտացոլումը:

Այս տեսանկյունից կարևոր նշանակություն է ստանում բնակչության ընդհանուր բարեկեցության մակարդակի ընդգրկում և ամբողջական գնահատման հստակ չափանիշների մշակումն ու կիրառումը, ինչի արդյունքում պիտի պատասխան տրվի այն հարցին, թե ինչպիսին է բնակչության կյանքի որակը, այսինքն՝ խնդիր է դրվում գնահատել բնակչության բարեկեցության իրական մակարդակը: Ստորև ներկայացված աշխատանքում փորձ է արվել լուծելու այդ խնդիրը ՀՀ մարզերի համար: Կառուցվել են բնակչության բարեկեցությունը պայմանավորող չորս կարևոր ոլորտների զարգացման մակարդակը գնահատող ընդհանրական ինդեքսներ և դրանց միջոցով դուրս են բերվել ՀՀ մարզերում բնակչության կենսամակարդակի գնահատականներ:

РЕЗЮМЕ

Оценка уровня благосостояния населения страны или отдельного региона является одной из ключевых и сложнейших проблем экономической науки, решение которой требует осуществления многофазовых исследовательских и аналитических работ, начиная с разработки методики построения многофакторного индикатора благосостояния и заканчивая сбором и систематизацией необходимых статистических данных и практической оценкой синтетического показателя.

Во многих случаях благосостояние искусственно отождествляется с величиной денежных доходов населения, то есть, в данном случае логика такова: высокие доходы дают возможность удовлетворять большее количество потребностей, что, в свою очередь, предполагает более высокий уровень благосостояния. Однако очевидно, что данный подход является неполноценным и ограниченным, не учитывает некоторые важные факторы, которые влияют на благосостояние, и поэтому анализ, проведенный на их основе, являет собой очень приблизительное отражение действительности.

С этой точки зрения, важное значение придается разработке и применению четких критериев наиболее полной и целостной оценки уровня благосостояния населения, т.е. задача заключается в оценке реального уровня благосостояния населения. В представленной работе сделана попытка решения данной задачи на примере регионов (марзов) Республики Армения. С этой целью разработаны синтетические индексы, оценивающие уровень развития четырех важнейших сфер, обуславливающих уровень благосостояния населения, на основании которых получены оценки общего благосостояния населения марзов РА.

ABSTRACT

In each country the evaluation of households and society welfare is big task. Defining and managing all the main factors which are conditioned it is one of the difficult and crucial tasks of economics. Their solution must rely on multidimensional research and analytical works implementation. It assumed proceeding the following stages; developing criteria for population welfare evaluation and suitable methodology till gathering statistical data for practical evaluation of selected criteria.

In most situations taking into account the difficulty of described tasks welfare artificially is identified with the magnitude of population's monetary incomes, in other words the logic is following: high income means possibility to satisfy large scale of needs, which in it's turn surmise high level of welfare. It's obvious that this approach isn't satisfactory and is limited, as it doesn't include a lot of important indicators. It means that in result of this sort of inter-regional and cross-country analyses and comparisons the real picture is doubtful.

Taking into account all above mentioned difficulties it is significant to develop and implement aggregate set of criteria's for evaluating population welfare. This approach must answer to the following question: what kind of population live quality we have?. In broader sense we have a task and must evaluate the real level of population welfare.

In present research we try to give the answer for the above mentioned task particularly through analyses and methodology suggestions for RA marzes.

Particularly we construct aggregate indexes, which will help us evaluate the level of development population welfare in the four important realms; relying on the proposed methodology we present population welfare calculations in RA marzes.

JEL Cassification Numbers: I31, I38, C82, R13

Keywords: Armenia, general welfare, population welfare measurement, regional developmant

Աշխատանքում արտահայտված տեսակետները հեղինակներինն են և կարող են չհամընկնել աջակից կազմակերպությունների դիրքորոշումներին:

Բովանդակություն

Նախաբան	7
Բարեկեցության մակարդակի գնահատման հիմնական մոտեցումները.....	9
Մեթոդը.....	16
Հաշվարկների արդյունքները.....	20
Բնակչության որակը ՀՀ մարզերում.....	20
Տնտեսական բարեկեցությունը ՀՀ մարզերում.....	32
Սոցիալական բարեկեցությունը ՀՀ մարզերում.....	43
Բնապահպանական ոլորտը ՀՀ մարզերում.....	50
Ամփոփում.....	56
Վերջաբան.....	58

Նախաբան

Մինչև վերջին ժամանակներս հասարակական զարգացման գլխավոր նպատակ էր համարվում տնտեսական աճը, իսկ որպես զարգացման հիմնական ցուցանիշ դիտարկվում էր համախառն ներքին արդյունքը: Սա, ըստ էության, հասարակությունում բավականաչափ երկար ժամանակահատվածի ընթացքում գերիշխող բարեկեցության ռեսուրսային հայեցակարգի հետևանք էր: Սույն հայեցակարգով մարդու բարեկեցությունը հանգում է իր տրամադրության տակ գտնվող նյութական բարիքների հավաքածուին: Ընդ որում, տնօրինվող սպառողական ռեսուրսների քանակից և որակից ելնելով մարդկանց բարեկեցության մասին պատկերացում կազմելու մոտեցումը հատկանշական է ոչ միայն հասարակական գիտակցության համար, այլ նաև առկա է շատ տնտեսական հետազոտողների մոտ: Դեռևս 1776թ-ին Ադամ Սմիթն իր հանրահռչակ «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին հետազոտությունը» սկսում է հետևյալ հարցադրմամբ. «ինչու՞ է ժողովուրդը լավ կամ վատ հագեցած բոլոր անհրաժեշտ առարկաներով և հարմարություններով, որոնց կարիքն ունի¹»: Ինչ վերաբերում է ժամանակակից հետազոտություններին, ապա դրանցում տարբեր երկրների զարգացման, բնակչության կենսամակարդակի գնահատումները հենվում են հիմնականում սպառողական զամբյուղի գաղափարի վրա, որն, ըստ էության, բնութագրում է տնային տնտեսությունների ապահովվածությունը նյութական բարիքներով և ծառայություններով²:

Այս մոտեցման ոչ լիարժեք և սահմանափակ բնույթը հետագայում ստիպեց անցում կատարել հասարակության զարգացման, բարեկեցության և կյանքի որակի գնահատման այլ հայեցակարգերի, որոնցից էր, մասնավորապես, Նոբելյան մրցանակակիր Ա.Սենի կողմից քառորդ դար առաջ ներկայացված հայեցակարգը: Վերջինս «բարեկեցություն» հասկացությունը տարածում է ոչ այնքան մարդուն շրջապատող առարկաների վրա, որքան այն վիճակի վրա, որում գտնվում է այդ առարկաների տիրապետման և դրանց սպառողական հատկանիշների օգտագործման հնարավորություն ունեցող անձը³:

Նույն հետազոտողի կողմից առաջարկված մեկ այլ հայեցակարգում մարդու կենսակերպը դիտվում է որպես մատչելի հավաքածուների բազմությունից մեկի՝ առավել նախապատվելիի ընտրության արդյունք⁴:

Այս երկու հայեցակարգերը, առաջինի համեմատությամբ իրենց ակնհայտ առավելությամբ հանդերձ, ունեն խիստ տեսական բնույթ և դրանց հիման վրա գործնական հետազոտությունների, գնահատումների իրականացման

¹ Նի Էօ Ա. Էնթեաաի օաի Էա Ի Ի ծեծի օա Է Ի ծե+Էի օծ օի օօոոօօօ Ի օծի օի օ. Ի .: Էչօ. Նի օ.-յե. Էեօօօօօօծն, 1962, ն. 17.

² Տես, օրինակ, Deaton A. The Analysis of Household Surveys. Wash. DC 1997.

³ Sen A. Commodities and Capabilities. Amsterdam, 1985, pp. 9-10.

⁴ Sen A. Inequality reexamined. Oxford, 1996, pp. 49-53.

հնարավորությունները խիստ սահմանափակ են՝ անհրաժեշտ տեղեկատվության իսպառ քաջակալության պատճառով:

Այդ իսկ պատճառով, հատկապես զարգացած երկրներում առավել մեծ տարածում է ստացել սուբյեկտիվ բարեկեցության հայեցակարգը, ըստ որի յուրաքանչյուր մարդ ինքն է գնահատում սեփական կյանքով բավարարվածության աստիճանը, և այս գնահատականների հանրագումարը թույլ է տալիս պատկերացում կազմել տվյալ հասարակության անդամների բարեկեցության մասին⁵:

Ինչ վերաբերում է մեր ու նաև հետհամայնավարական մյուս հասարակություններին, ապա մեզանում ևս ընդհուպ մինչև նախորդ դարի վերջին տասնամյակը գերիշխող էր սպառվող ապրանքների որակական բնութագրիչների հիման վրա բարեկեցության գնահատման մոտեցումը: Դրանով իսկ բարեկեցությունը տեսականորեն որոշվում էր սպառողական ապրանքների, բարիքների ու ծառայությունների որակով, իսկ բարեկեցության բովանդակությունն արհեստականորեն մոտեցվում էր «բարձրորակ կյանք» հասկացությանը: Ըստ այդմ, ի հայտ էր գալիս հակասություն. ստացվում էր, որ տնտեսագիտությունը միևնույն կատեգորիան բնորոշում է բոլորովին այլ կերպ, ընդ որում՝ ավելի լայն համատեքստում, քան տեսական սոցիոլոգիան և սոցիալական փիլիսոփայությունը, չնայած որ վերջիններիս հետազոտությունների առարկայական շրջանակն ավելի ընդգրկուն է:

⁵ Campbell A. The Sense of Well-Being in America, NY, 1981, p.4.

Քարեկեցության մակարդակի գնահատման հիմնական մոտեցումները

Մինչ այժմ մշակվել և կիրառվում են բնակչության բարեկեցության մակարդակի գնահատման տարբեր ցուցանիշներ: Այսպես, առավել լայն կիրառություն ունի Մարդկային զարգացման ինդեքսը (ՄՁԻ), որի հաշվարկներն իրականացվում են ՄԱԿ-ի մասնագետների կողմից մշակված մեթոդաբանության հիման վրա և ամեն տարի դրա արդյունքները՝ աշխարհի շուրջ 180 երկրների համար գնահատված, արտացոլվում են ՄԱԶԾ տարեկան զեկույցներում:

ՄՁԻ-ն, ըստ էության, մարդկային հասարակության զարգացման մակարդակը բնորոշող երեք կարևորագույն չափանիշների պարզ հանրագումար է: Այն ինչ-որ տեղ ընդհանրացնում է ժամանակակից հասարակության անդամի նորմալ կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ բաղադրիչները, կարելի է ասել նաև՝ յուրաքանչյուր անհատի ցանկությունները. ապրել երկար և առողջ կյանքով, լինել կրթված, ունենալ պատշաճ եկամուտներ: Ինքնըստիներքյան հասկանալի է, որ մարդկային զարգացման մակարդակը նման չափանիշների միջոցով արտահայտելը թույլ է տալիս ավելի բազմակողմանիորեն գնահատել յուրաքանչյուր երկրի ընդհանուր զարգացման աստիճանը, քան կարող էր արվել միայն եկամուտները՝ որպես երկրների համեմատության հիմք ընդունելու պարագայում, ինչը, շատ դեպքերում, թյուրիմացաբար նույնացվում է բարձր կենսամակարդակի, լավ ապրելակերպի հետ:

Ակնհայտ է, որ ՄՁԻ-ն ունի շատ առավելություններ, որոնցից կարելի է նշել պարզ կառուցվածքը, գործնական լայն կիրառելիությունը, միջերկրային համեմատությունների իրականացման հնարավորությունը և այլն: Մյուս կողմից, այն ունի որոշակի թերություններ, որոնք սահմանափակում են այս ինդեքսը որպես բնակչության բարեկեցության մակարդակի գնահատական կիրառելու հնարավորությունները: Այսպես, բարեկեցության վրա ներգործող շատ կարևոր ոլորտներ դուրս են մնում ՄՁԻ-ից, բացի այդ, դրա կառուցման հիմքում դրված է մարդկային զարգացման հայեցակետը, որը միայն մասնակիորեն է համապատասխանում մարդկային քաղաքակրթության զարգացման ներկա մակարդակին բնորոշ տրամաբանությանը:

Գոյություն ունեն բնակչության բարեկեցության գնահատման այլ մոտեցումներ ևս: Օրինակ, դրանց շարքում կարելի է նշել Նորդհաուսի և Տոբինի կողմից մշակված Տնտեսական բարեկեցության չափի ցուցանիշը (Measure of Economic Welfare), որը հաշվարկվում է բարեկեցության մակարդակի հետ կապ չունեցող (հեղինակների կարծիքով) գործոնները ՀՆԱ-ից հանելու և բարեկեցության վրա ազդող, բայց ՀՆԱ-ում հաշվի չառնված գործոններն ավելացնելու հիման վրա⁶:

⁶ Nordhaus W. and Tobin J. Is growth obsolete? in: Economic Growth National Bureau of Economic Research. General Serwis # 96 E. Columbia University Press, New York. 1972

Հեղինակների մոտեցմամբ, տնտեսական բարեկեցությունը կապված է սպառման և ոչ թե արտադրության հետ, ուստի ՀՆԱ-ից անհրաժեշտ է պակասեցնել այն հոդվածները, որոնք առնչվում են արտադրությանն ու ներդրումներին (ինչպես, օրինակ, հիմնական միջոցների արժեքավազումը): Բացի այդ, հիմնական ցուցանիշից նվազեցնում են նաև կրթական և առողջապահական նպատակներով իրականացվող ծախսերը՝ ենթադրելով, որ դրանք ոչ թե սպառողական, այլ պաշտպանական բնույթ ունեն: Ի հավելումն նշվածի, հեղինակները ՀՆԱ-ից պակասեցնում են նաև աշխատանքի փոխարինման հետ կապված ծախսերը, ուսուցանական և կոմունալ ծառայությունների, ճանապարհների պահպանության ու վերականգնման և ազգային անվտանգության ծախսերը: Դեռ ավելին, Տոբինի և Նորդհաուսի կարծիքով, ազգային անվտանգության անհատական համարժեքները, այսինքն տների, ավտոմեքենաների և անձնական այլ գույքի անվտանգության ապահովման համար կատարվող ծախսերը ևս որևէ առնչություն չունեն բնակչության բարեկեցության բարելավման հետ, ուստի դրանք ևս պետք է բացառել տնտեսական բարեկեցության մակարդակը գնահատելիս:

1980-ականների սկզբներին Ք. Ջոլրոսի կողմից առաջարկվեց Բարեկեցության տնտեսական ասպեկտներ (Economic Aspects of Welfare) ցուցանիշը: Այստեղ ևս ելակետային մեծությունը ՀՆԱ-ն է, որից հանվում են՝

- աշխատանքի փոխարինման ծախսերը,
- կրթական ծախսերը,
- գովազդային ընդհանուր ծախսերի կեսը, քանի որ հեղինակի գնահատումների համաձայն, գովազդի միայն կեսն է որ արժեքավոր տեղեկատվություն է պարունակում և դրանով իսկ՝ որոշակիորեն ներգործում բարեկեցության մակարդակի վրա,
- շրջակա միջավայրի աղտոտման նկատմամբ հսկողության սահմանման համար իրականացվող ծախսերը,
- մթնոլորտի աղտոտումից առաջացած վնասների գնահատականը,
- առողջապահական ծախսերի կեսը, քանի որ, ըստ հեղինակի, այդ ծախսերի կեսի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է արտաքին սթրեսներից ծագող հիվանդություններով,
- ազգային ռեսուրսների սպառումը գնահատող մեծությունը⁷:

Այս մեթոդով հաշվարկված բարեկեցության տնտեսական գնահատականը համադրելով ԱՄՆ 1950-1975թթ. ՀՆԱ աճի տեմպերի հետ, հեղինակը եկավ այն եզրակացության, որ հասարակական բարեկեցությունն աճում է ավելի փոքր տեմպերով, քան ՀՆԱ-ն: Դեռ ավելին, հաշվարկներով հիմնավորվեց, որ գոյություն ունի երկրի

⁷ Offer A. Economic Welfare Measurements and Human Well-Being. Nuffield College. Oxford, March 2000. p.8.

տնտեսական զարգացման այնպիսի մի աստիճան, երբ տնտեսական աճը դադարում է սոցիալական բարեկեցության աճին նպաստելուց: Վերջինս էլ, իր հերթին, նվազելով՝ ի վերջո դառնում է բացասական:

1980-ական թվականների վերջերին Հ. Գեյլիի և Ջ. Կոբի կողմից առաջարկվեց Կայուն տնտեսական բարեկեցության ինդեքսը⁸ ((ԿՏԲԻ), Index of Sustainable Economic Welfare, ISEF): Ինդեքսում որպես ելակետ վերցվում են սպառման ծախսերը, որոնք այնուհետև ճշգրտվում են ՀՆԱ-ից դուրս մնացած տնտեսական կյանքի 18 առանձին ուղղությունների գնահատականներով: Ընդհանուր առմամբ, ՀՆԱ-ի և ԿՏԲԻ-ի առանցքային տարբերությունները կայանում են նրանում, որ երկրորդ ցուցանիշում՝

- հաշվի չեն առնվում սոցիալական և շրջակա միջավայրի ծախսերի փոխհատուցումները (այսպես կոչված՝ պաշտպանական ծախսերը),
- ներառված են երկարաժամկետ բնապահպանական կորուստներն ու բնական կապիտալի արժեքնվազումը,
- ներառված է մարդու կողմից ստեղծված կապիտալի զուտ կազմավորումը, այսինքն՝ ներդրումները,
- հաշվի են առնված եկամտի բաշխման փոփոխությունները՝ ելնելով այն հիմնադրույթից, որ լրացուցիչ եկամուտներն աղքատների կենսամակարդակը բարձրացնում են ավելի մեծ չափով, քան հարուստներինը,
- ներառված է տնային տնտեսություններում սպառվող աշխատուժի արժեքը:

Ըստ այդմ՝

$$ISEW = PC + NPE - DPE + CF + DS - EC - DNC$$

որտեղ՝

PC - անհատական սպառում,

NPE - ոչ պաշտպանական բնույթի հանրային ծախսեր,

DPE - պաշտպանական բնույթի անհատական ծախսեր,

CF - կապիտալի կազմավորումը,

DS - տնային տնտեսություններում մատուցված ծառայություններ,

EC - շրջակա միջավայրի դեգրադացիայի գնահատված ծախսեր,

DNC - բնական կապիտալի արժեքնվազում:

Հետագայում, կատարելագործելով ԿՏԲԻ ցուցանիշի կառուցման հիմքում ընկած սկզբունքները, 1995թ-ին Կ.Կոբի, Թ.Հալսթեդի և Ջ.Ռոուի կողմից առաջարկվեց մի նոր

⁸ Daly H.E. And Cobb J. For the common good: redirecting the economy towards community, the environment and a sustainable future. Boston, Beacon Press, 1989, 482p.

ընդհանրական ցուցանիշ՝ Իրական առաջընթացի ցուցիչը⁹ ((ԻԱՑ), Genuine Progress Indicator, GPI): Ինչպես թվարկված նախորդ ցուցանիշների դեպքում, այստեղ ևս հաշվարկման համար հիմք է հանդիսանում անհատական սպառման մեծությունը, որը հետագայում ճշգրտվում է տնտեսական, սոցիալական և բնապահպանական բնույթի ծախսերն արտացոլող ցուցանիշներով: ԻԱՑ-ի հաշվարկման ընդհանուր բանաձևը հետևյալն է.

$$GPI = PC - CI + BI$$

որտեղ՝

CI- ՀՆԱ-ում ներառված, սակայն ԻԱՑ-ից հանվող ծախսերն են,

BI- արտահայտում է ՀՆԱ-ում չներառված, բայց ԻԱՑ-ին գումարվող օգուտները: Ինչ վերաբերում է PC մեծությանը, ապա այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$PC = EC + SC + ENC$$

որտեղ EC, SC և ENC-ն իրենցից ներկայացնում են համապատասխանաբար տնտեսական, սոցիալական և բնապահպանական բնույթի ծախսերը կամ կորուստները: Այս մեծությունները հաշվարկելիս օգտագործվում են հիմնականում փորձագիտական եղանակով ստացված գնահատականներ: Այսպես՝

$$EC = AID + NFLD + CD$$

որտեղ՝

AID- տնտեսությունում եկամուտների անհավասարաչափ բաշխման հետևանքով առաջացող կորուստներն են,

NFLD- գուտ արտաքին փոխառությունները կամ վարկավորման ծախսերը (համապատասխան նշանով), որոնք գնահատում են ընթացիկ սպառման նպատակով օտարերկրյա պետություններից արվող (կամ դրանց տրվող) փոխառությունների ապագա ծախսերը (օգուտները),

CD- երկարատև օգտագործման ապրանքների ձեռքբերման ծախսերը:

$$SC = CC + CAA + CCM + CFB + LLT + CUE$$

որտեղ՝

CC- արտահայտում է հանցագործությունների հետևանքով հասարակությանը պատճառված կորուստները,

⁹ Cobb C., Halstead T. and Rowe J. If The GDP Is Up, Why Is America Down? The Atlantic Monthly, October 1995, pp. 59-78 (www.theatlantic.com/politics/ectig/gdp.htm).

CAA- ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառած կորուստները,

CCM- ժամանակաի փոխարինման կորուստները,

CFB- ընտանիքների քայքայման հետևանքով ի հայտ եկող վնասները,

LLT- ազատ ժամանակի կորուստը,

CUE- թերզբաղվածության, գործազրկության կորուստները:

$$ENC = CHP + CWP + CAP + CNP + LW + LF + DR + CED + COD + LOF$$

որտեղ՝

CHP- տնային տնտեսության աղտոտվածության մակարդակի նվազեցման համար անհրաժեշտ ծախսերն են,

CWP- ջրային ռեսուրսների աղտոտման հետևանքով առաջացող կորուստները,

CAP- մթնոլորտի աղտոտման հետևանքով առաջացող կորուստները,

CNP- քաղաքային աղմուկից ի հայտ եկող կորուստները,

LW- ջրդի հողատարածքների կորուստը,

LF- ֆերմերային հողատարածքների նվազումից կորուստները,

DR- չվերականգնվող բնական ռեսուրսների նվազման մակարդակը,

CED- շրջակա միջավայրին պատճառված, երկարաժամկետ հեռանկարում իրենց ներգործությունը պահպանող վնասների, աղետների հետևանքով ծագող կորուստները,

COD- օգոնի շերտի մոսրացման հետևանքի գնահատականը,

LOF- երկարամյա անտառների կորուստը գնահատող մեծությունը:

Ինչ վերաբերում է ՀՆԱ-ի հաշվարկման ժամանակ անտեսվող, սակայն ԻԱՑ-ում ներառվող գումարային օգուտների BI ցուցանիշին, ապա այն գնահատվում է հետևյալ կերպ.

$$BI = VHP + VVW + SCD + SHS + NCI$$

որտեղ՝

VHP- տնային տնտեսությունների ներսում դրանց անդամների կողմից կատարվող տարբեր աշխատանքների, ինչպես նաև երեխաների խնամքի հետ կապված ծառայությունների գնահատված արժեքն է,

VVW- կամավոր հիմունքներով կատարվող աշխատանքների արժեքը,

SCD- երկարաժամկետ օգտագործման սպառողական ապրանքների օգտակարության գնահատականը՝ դրամական արտահայտությամբ,
 SHS- մայրուղիներից և փողոցներից օգտվելու արժեքը,
 NCI- զուտ կապիտալ ներդրումների մեծությունը:

Հարկ է նշել, որ տարբեր տարիներին առանձին երկրների հետազոտողների կողմից պարբերաբար իրականացվում են ԻԱՑ-ի գնահատումներ, որոնց արդյունքների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանց արժեքը, որպես կանոն, միջինում 3-3.5 անգամ զիջում է ՀՆԱ մեծությանը, և բացի այդ, դրա հավելաճի տեմպերը շատ ավելի համեստ են: Օրինակ, ԱՄՆ 2000թ. ցուցանիշների հիման վրա իրականացված գնահատումների արդյունքում մեկ շնչին ընկնող ԻԱՑ-ն կազմել է 9550 ԱՄՆ դոլար՝ ՀՆԱ 33497 ԱՄՆ դոլարի դիմաց: 1974-2000թթ ընթացքում ԱՄՆ ՀՆԱ իրական աճը կազմել է 125%, այն դեպքում, երբ ԻԱՑ-ն նույն ժամանակահատվածում աճել է ընդամենը 25%-ով¹⁰:

Ուշագրավ է նաև կանադացի հետազոտողներ Լարս Օսբերգի և Էնդրյու Շարփի կողմից առաջարկված Տնտեսական բարեկեցության ինդեքսը (Index of Economic Well-Being), որը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ սպառում, հարստության պաշարներ, եկամուտների բաշխման հավասարություն, տնտեսական անվտանգություն¹¹: Ինդեքսի հեղինակները նշում են, որ իրենք հաշվի են առնում միայն տնտեսական բարեկեցության գործոնները՝ վերանալով սոցիալական բարեկեցության գործոններից: Ընդհանուր առմամբ, ինդեքսի հաշվարկման բանաձևն ունի հետևյալ տեսքը՝

$$IEWB = 0.25[C + UP + G + WT]LE + 0.25[K + R \& D + HC + NR - D - ED] + 0.25[0.75LIM + 0.25Gini] + 0.25[0.2772UR + 0.4066ILL + 0.2072SPP + 0.1090OLD]$$

որտեղ՝

- C - իրական ճշգրտված անձնական սպառում, մեկ շնչի հաշվով,
- G - պետական կառավարման վերջնական սպառման ծախսեր՝ իրական արտահայտությամբ, մեկ շնչի հաշվով,
- WT- աշխատանքային ժամանակի փոխարինման իրական արժեք,
- UP - չվճարված աշխատանքի իրական արժեք՝ մեկ շնչի հաշվով,
- K - հարստության պաշարներ՝ իրական արտահայտությամբ, մեկ շնչի հաշվով,
- LE - կյանքի տևողության ինդեքս,

¹⁰ Cobb C., Glickman M. and Cheslog C. The Genuine Progress Indicator 2000 Update. Redefining Progress Issue Brief, December 2001, pp. 2-3.

¹¹ Í áçíð áí òí àà è áí ààðíòàà, 2002, N3, Ì áæáóí àðí áí àý àííí òèàðèý í í èçó-áí èþ áí òí àà è áí ààðíòàà.

R&D - գիտահետազոտական մշակումների վրա իրականացված կուտակային ծախսեր,

NR - բնական ռեսուրսների պաշարներ,

HC - մարդկային կապիտալի պաշարներ,

D - զուտ արտաքին պարտավորություններ,

ED - շրջակա միջավայրի դեգրադացիայի արժեք,

LIM - աղբատության ինտենսիվություն,

Gini - Ջինի գործակից,

UR - գործազրկության պատճառով եկամուտների հնարավոր նվազման ռիսկ,

ILL - հիվանդության պատճառով եկամուտների հնարավոր նվազման ռիսկ,

SPP - եկամուտների հնարավոր նվազման ռիսկ՝ այն ընտանիքներում, որտեղ երեխաները մեծանում են առանց հոր,

OLD - ծերության պատճառով եկամուտների նվազման ռիսկ:

Ներկայացված բոլոր այս ցուցանիշների վերաբերյալ կարելի է ասել, որ դրանք հանդիսանում են բնակչության բարեկեցության մասնակի գնահատականներ: Բացի այդ, դրանցում շատ հաճախ ընդգրկվում են այնպիսի ցուցանիշներ, որոնք վիճակագրական ծառայությունների կողմից չեն հաշվարկվում և հետևաբար դրանք կարող են գնահատվել միայն փորձագիտական եղանակով, ինչն ակնհայտորեն սահմանափակում է այդ ցուցանիշների լայն կիրառման հնարավորությունները: Կարևոր հարցերից է նաև դիտարկվող ինդեքսների բաղադրիչների կշիռների գնահատումը, ինչը շատ հաճախ արվում է սուբյեկտիվորեն, առանց որևէ լուրջ գիտական հիմնավորման:

$$\tilde{x} = 1 - \frac{|x - x_{opt}|}{\max\{(x_{max} - x_{opt}), (x_{opt} - x_{min})\}}$$

Նշենք, որ x_{min} , x_{max} և x_{opt} արժեքների գնահատման համար կիրառվում է էնպիրիկ մոտեցում: Օրինակ, որպես x_{min} և x_{max} վերցվում են x փոփոխականի համապատասխանաբար նվազագույն և առավելագույն (կամ էլ դրանց մոտ գտնվող) արժեքները՝ ըստ բոլոր դիտարկումների:

Այնուհետև բարեկեցությունը պայմանավորող յուրաքանչյուր ոլորտի համար կառուցվում է առանձին սինթետիկ ինտեգրալային չափանիշ, այսինքն տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշները խմբավորվում են մեկ ընդհանուր ցուցանիշի մեջ:

Այդ նպատակով, **երկրորդ փուլում** որոշվում է ինտեգրալային ցուցանիշի չափողականությունը: Դա արվում է հետևյալ քայլերի արդյունքում.

1. նորմավորված $\tilde{x}_i^{(1)}, \tilde{x}_i^{(2)}, \dots, \tilde{x}_i^{(p)}$, $i = 1, 2, \dots, n$ ցուցանիշների արժեքների հիման վրա կառուցվում է $\tilde{X} = (\tilde{x}^{(1)}, \tilde{x}^{(2)}, \dots, \tilde{x}^{(p)})^T$ վեկտորի կովարիացիոն մատրիցը $|\text{cov}(\tilde{X})|$,
2. կառուցվում է $|\text{cov}(\tilde{X}) - \lambda I_p| = 0$ բնութագրիչ հավասարումը, որի լուծման արդյունքում դուրս են բերվում մատրիցի $\lambda_1 \geq \lambda_2 \geq \dots \geq \lambda_p \geq 0$ սեփական արժեքները,
3. ինտեգրալային ցուցանիշի m_0 չափողականությունը որոշվում է հետևյալ պայմանից.

$$m_0 = \min_{1 \leq m \leq p-1} \left\{ m; \frac{\lambda_1 + \lambda_2 + \dots + \lambda_m}{\lambda_1 + \lambda_2 + \dots + \lambda_p} \geq 0.55 \right\}$$

Երրորդ փուլում $\tilde{x}_i^{(1)}, \tilde{x}_i^{(2)}, \dots, \tilde{x}_i^{(p)}$ մասնակի չափանիշները բաժանվում են m_0 թվով խմբերի:

Չորրորդ փուլում կառուցվում են M_1, M_2, \dots, M_{m_0} խմբերի մեջ ներառված մասնակի չափանիշների մոդիֆիկացված գլխավոր բաղադրիչները: Դա իրականացվում է հետևյալ քայլերի արդյունքում.

1. M_j , $j = 1, 2, \dots, m_0$ խմբում ընդգրկված $\tilde{x}^{(1)}(M_j), \tilde{x}^{(2)}(M_j), \dots, \tilde{x}^{(p)}(M_j)$ մասնակի չափանիշների արժեքների հիման վրա կառուցվում է $|\text{cov}(\tilde{X}(M_j))|$ մատրիցը,
2. որոշվում է $|\text{cov}(\tilde{X}(M_j))|$ մատրիցի առավելագույն $\lambda_1(M_j)$ սեփական արժեքը,

3. որոշվում է $|\text{cov}(\tilde{X}(M_j))|$ մատրիցի $\lambda(M_j) = (\lambda_1(M_j), \lambda_2(M_j), \dots, \lambda_{p_j}(M_j))^T$ սեփական վեկտորը՝ հետևյալ հավասարումների համակարգի լուծման արդյունքում.

$$(\text{cov}(X(M_j)) - \lambda_1(M_j)I_{p_j})\lambda(M_j) = 0$$

4. որոշվում են M_j խմբում ներառված մասնակի չափանիշների $\tilde{y}^{(j)}$ մոդիֆիկացված գլխավոր բաղադրիչների արժեքները՝ հետևյալ բանաձևի միջոցով.

$$\tilde{y}^{(j)} = \sum_{q=1}^{p_j} \lambda_1^2(M_j) \cdot \tilde{x}^{(q)}, \quad i = 1, 2, \dots, n$$

Հինգերորդ փուլում հաշվարկվում են $\tilde{y}^{(1)}, \dots, \tilde{y}^{(m_0)}$ ինտեգրալային բնութագրիչների \tilde{v}_j կշիռները՝ ելնելով բոլոր մասնակի չափանիշների գումարային դիսպերսիաներում դրանց դիսպերսիայի հարաբերակցությունից: Այսինքն.

$$\tilde{v}_j = \frac{s_{\tilde{y}_j}^2}{\sum_{k=1}^p s_{\tilde{x}^{(k)}}^2}$$

որտեղ՝

$$s_{\tilde{y}^{(j)}}^2 = \frac{1}{n} \sum_{i=1}^n (\tilde{y}_i^{(j)} - \bar{y}^{(j)})^2, \quad \bar{y}^{(j)} = \frac{1}{n} \sum_{i=1}^n \tilde{y}_i^{(j)}$$

$$s_{\tilde{x}^{(k)}}^2 = \frac{1}{n} \sum_{i=1}^n (\tilde{x}_i^{(k)} - \bar{\tilde{x}}^{(k)})^2, \quad \bar{\tilde{x}}^{(k)} = \frac{1}{n} \sum_{i=1}^n \tilde{x}_i^{(k)}$$

Ինդեքսի հաշվարկման համար \tilde{v}_j կշռային գործակիցները նորմավորվում են հետևյալ կերպ.

$$v_j = \frac{\tilde{v}_j}{\sum_{l=1}^{m_0} \tilde{v}_l}$$

Ակնհայտ է, որ այս դեպքում տեղի ունեն կշիռների համար անհրաժեշտ պայմանները.

$$\sum_{j=1}^{m_0} v_j = 1, \quad v_j \geq 0, \quad (j = 1, \dots, m_0)$$

Վեցերորդ փուլում հաշվարկվում է բնակչության բարեկեցության տվյալ ոլորտը գնահատող սինթետիկ ինտեգրալային y ցուցանիշը: Դա արվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$y = \sum_{j=1}^{m_0} v_j \tilde{y}^{(j)}$$

Հաշվարկների արդյունքները

Ներկայացված մեթոդոլոգիայի հիման վրա իրականացվել է ՀՀ մարզերի բնակչության բարեկեցության մակարդակի գնահատում՝ ըստ բարեկեցությունը պայմանավորող չորս առանցքային ուղղությունների՝ բնակչության որակ, տնտեսական բարեկեցություն, սոցիալական բարեկեցություն և բնապահպանություն:

Բնակչության որակը ՀՀ մարզերում

Ցուցանիշների առաջին խումբը, որը դիտարկվել է մեր կողմից, առնչվում է ժողովրդագրական, առողջապահական և կրթական ոլորտներին: Ըստ այդմ, պայմանականորեն կարելի է համարել, որ դրանք բնորոշում են մարզերում բնակչության որակը: Միգուցե առաջին հայացքից այս եզրույթի կիրառումը տվյալ դեպքի համար թվա ոչ տեղին, այնուհանդերձ մեր կարծիքով, այն առավել դիպուկ բնութագիր է տալիս հետազոտվող երևույթին: Որակը, ըստ էության, իրենից ներկայացնում է հետազոտության օբյեկտի էական հատկանիշների ամբողջությունը: Այս տեսանկյունից, որպես «բնակչություն» հետազոտության օբյեկտի էական հատկանիշներ դիտարկելով դրա առողջական, կրթական մակարդակները, վերարտադրության հնարավորությունները և այլն, դրանց ամբողջությունը կարելի է համարել բնակչության որակի առանցքային բնութագրիչներ:

Ըստ այդմ, բնակչության որակի գնահատման համար ընտրվել են 17 ցուցանիշներ, որոնք ամփոփվել են հետևյալ երեք ենթախմբերում.

1.1. դեմոգրաֆիա և հասարակության առողջության մակարդակ.

- 1.1.1. բնակչության բնական աճը,
- 1.1.2. մանկամահացության մակարդակը (մինչև 1 տարեկան, 1000 բնակչի հաշվով),
- 1.1.3. մահացությունը վարակիչ և մակաբուժական հիվանդություններից (10000 բնակչի հաշվով),
- 1.1.4. մահացությունը չարորակ նորագոյացություններից (10000 բնակչի հաշվով),
- 1.1.5. մահացությունը արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (10000 բնակչի հաշվով),
- 1.1.6. մահացությունը շնչառական օրգանների հիվանդություններից (10000 բնակչի հաշվով),
- 1.1.7. մահացությունը մարտոդական օրգանների հիվանդություններից (10000 բնակչի հաշվով),
- 1.1.8. մահացությունը դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից (10000 բնակչի հաշվով),
- 1.1.9. մահացությունը բնածին արատներից (10000 բնակչի հաշվով),
- 1.1.10. բժիշկների թվաքանակը (1000 բնակչի հաշվով),

1.2. ընտանեկան դրույթուն.

1.2.1. մարզում գրանցված ամուսնությունների թիվը (1000 բնակչի հաշվով),

1.2.2. ամուսնալուծությունների թիվի հարաբերակցությունը ամուսնությունների թվի նկատմամբ,

1.3. կրթական մակարդակ.

1.3.1. պետական նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված երեխաների թիվը (1000 բնակչի հաշվով),

1.3.2. պետական նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված երեխաների հիվանդացության մակարդակը,

1.3.3. հանրակրթական դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվը (1000 բնակչի հաշվով),

1.3.4. արվեստի, երաժշտական և գեղարվեստի դպրոցներ հաճախող երեխաների թիվը (1000 բնակչի հաշվով),

1.3.3. թանգարանների այցելուների թիվը (1000 բնակչի հաշվով):

Աղյուսակներ 1 և 2-ում ներկայացված են 1.1 ենթախմբի ցուցանիշների արժեքները ՀՀ մարզերի կտրվածքով և մարզերի վարկանիշը՝ ըստ յուրաքանչյուր ցուցանիշի՝ 2001-2004թթ. ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 1.

1.1 ենթախմբի ցուցանիշների դինամիկան ՀՀ մարզերում 2001-2004թթ.

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
1.1.1	2001	1,69	3,89	3,02	3,50	3,87	1,86	3,98	1,54	2,52	4,46	1,97
	2002	1,44	3,43	2,82	2,96	3,00	1,28	3,29	0,86	2,65	2,90	1,81
	2003	2,02	4,01	3,66	3,32	4,65	2,72	4,32	2,94	3,85	4,25	2,64
	2004	2,79	4,51	4,57	5,02	5,84	2,45	5,24	3,10	2,90	4,15	3,06
1.1.2	2001	1,31	1,01	1,84	1,30	1,89	1,57	1,58	2,26	1,44	1,43	1,86
	2002	1,42	0,94	0,92	1,45	1,64	1,72	1,25	1,73	1,18	0,54	1,79
	2003	1,40	0,86	0,62	0,94	1,51	1,90	1,17	1,63	0,85	1,43	1,79
	2004	1,47	0,79	0,84	1,11	0,84	1,76	1,13	1,81	1,63	1,25	1,41
1.1.3	2001	0,06	0,06	0,05	0,05	0,05	0,07	0,05	0,07	0,06	0,06	0,07
	2002	0,10	0,09	0,09	0,08	0,09	0,11	0,08	0,11	0,09	0,09	0,11
	2003	0,07	0,07	0,07	0,07	0,07	0,09	0,06	0,08	0,07	0,07	0,09
	2004	0,07	0,07	0,07	0,06	0,06	0,08	0,06	0,08	0,07	0,07	0,09
1.1.4	2001	1,31	1,18	1,14	1,13	1,13	1,52	1,05	1,44	1,29	1,26	1,54
	2002	1,33	1,26	1,18	1,16	1,24	1,54	1,11	1,50	1,26	1,30	1,57
	2003	1,39	1,37	1,26	1,28	1,28	1,61	1,22	1,45	1,31	1,34	1,65
	2004	1,41	1,42	1,27	1,25	1,24	1,63	1,22	1,56	1,40	1,35	1,66

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
1.1.5	2001	4,19	3,78	3,63	3,61	3,60	4,85	3,36	4,61	4,11	4,04	4,92
	2002	4,42	4,19	3,94	3,86	4,12	5,12	3,71	4,98	4,18	4,33	5,21
	2003	4,50	4,43	4,07	4,15	4,14	5,21	3,95	4,68	4,22	4,33	5,34
	2004	4,42	4,44	3,97	3,92	3,88	5,11	3,82	4,89	4,37	4,22	5,19
1.1.6	2001	0,38	0,35	0,33	0,33	0,33	0,44	0,31	0,42	0,38	0,37	0,45
	2002	0,48	0,45	0,42	0,42	0,44	0,55	0,40	0,54	0,45	0,47	0,56
	2003	0,49	0,48	0,44	0,45	0,45	0,57	0,43	0,51	0,46	0,47	0,58
	2004	0,48	0,48	0,43	0,42	0,42	0,55	0,41	0,53	0,47	0,45	0,56
1.1.7	2001	0,29	0,26	0,25	0,25	0,25	0,34	0,23	0,32	0,29	0,28	0,34
	2002	0,31	0,30	0,28	0,27	0,29	0,36	0,26	0,35	0,30	0,31	0,37
	2003	0,31	0,31	0,28	0,29	0,29	0,36	0,27	0,32	0,29	0,30	0,37
	2004	0,31	0,31	0,28	0,27	0,27	0,35	0,26	0,34	0,30	0,29	0,36
1.1.8	2001	0,35	0,32	0,31	0,30	0,30	0,41	0,28	0,39	0,35	0,34	0,41
	2002	0,35	0,33	0,31	0,30	0,32	0,40	0,29	0,39	0,33	0,34	0,41
	2003	0,33	0,32	0,30	0,30	0,30	0,38	0,29	0,34	0,31	0,31	0,39
	2004	0,36	0,36	0,33	0,32	0,32	0,42	0,31	0,40	0,36	0,35	0,43
1.1.9	2001	0,05	0,04	0,04	0,04	0,04	0,05	0,04	0,05	0,05	0,04	0,05
	2002	0,05	0,05	0,04	0,04	0,05	0,06	0,04	0,05	0,05	0,05	0,06
	2003	0,05	0,05	0,04	0,05	0,05	0,06	0,04	0,05	0,05	0,05	0,06
	2004	0,05	0,05	0,05	0,05	0,05	0,06	0,05	0,06	0,05	0,05	0,06
1.1.10	2001	6,83	1,62	1,58	1,60	1,39	2,09	1,79	2,16	1,96	1,79	1,89
	2002	7,04	1,60	1,48	1,50	1,29	1,89	1,71	1,95	1,96	1,68	1,73
	2003	7,24	1,60	1,50	1,47	1,27	1,75	1,68	1,99	1,78	1,81	1,72
	2004	7,04	1,67	1,48	1,48	1,35	1,78	2,08	2,10	1,83	1,54	1,70

Աղյուսակ 2.

ՀՀ մարզերի վարկանիշներն ըստ 1.1 ենթախմբի ցուցանիշների (2001-2004թթ.)

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
1.1.1	2001	10	3	6	5	4	9	2	11	7	2	8
	2002	9	1	6	4	3	10	2	11	7	5	8
	2003	11	4	6	7	1	9	2	8	5	3	10
	2004	10	5	4	3	1	11	2	7	9	6	8
1.1.2	2001	3	1	8	2	10	6	7	11	5	4	9
	2002	6	3	2	7	8	9	5	10	4	1	11
	2003	6	3	1	4	8	11	5	9	2	7	10
	2004	8	1	2	4	3	10	5	11	9	6	7

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
1.1.3	2001	8	5	3	2	4	10	1	9	7	6	11
	2002	8	6	3	2	4	10	1	9	5	7	11
	2003	8	7	3	2	4	10	1	9	5	6	11
	2004	8	7	4	2	3	10	1	9	6	5	11
1.1.4	2001	8	5	4	3	2	10	1	9	7	6	11
	2002	8	6	3	2	4	10	1	9	5	7	11
	2003	8	7	2	3	4	10	1	9	5	6	11
	2004	7	8	4	3	2	10	1	9	6	5	11
1.1.5	2001	8	5	4	3	2	10	1	9	7	6	11
	2002	8	6	3	2	4	10	1	9	5	7	11
	2003	8	7	2	4	3	10	1	9	5	6	11
	2004	7	8	4	3	2	10	1	9	6	5	11
1.1.6	2001	8	5	4	3	2	10	1	9	7	6	11
	2002	8	6	3	2	4	10	1	9	5	7	11
	2003	8	7	3	2	4	10	1	9	5	6	11
	2004	7	8	4	3	2	9	1	10	6	5	11
1.1.7	2001	8	5	4	3	2	10	1	9	7	6	11
	2002	8	6	3	2	4	10	1	9	5	7	11
	2003	8	7	3	2	4	10	1	9	5	6	11
	2004	7	8	4	3	2	10	1	9	6	5	11
1.1.8	2001	8	5	4	3	2	10	1	9	7	6	11
	2002	8	6	3	2	4	10	1	9	5	7	11
	2003	8	7	2	3	4	10	1	9	5	6	11
	2004	7	8	4	3	2	10	1	9	6	5	11
1.1.9	2001	8	5	4	3	2	10	1	9	7	6	11
	2002	8	5	3	2	4	10	1	9	6	7	11
	2003	8	7	2	3	4	10	1	9	5	6	11
	2004	7	8	4	3	2	10	1	9	6	5	11
1.1.10	2001	1	8	10	9	11	4	6	3	2	7	5
	2002	1	8	10	9	11	4	6	3	2	7	5
	2003	1	8	9	10	11	5	7	2	4	3	6
	2004	1	7	10	9	11	5	3	2	4	8	6

Բնակչության բնական աճի առավել բարձր տեմպ արձանագրվել է Գեղարքունիքի մարզում, որին հաջորդում են Կոտայքն ու Արմավիրը: Վերջինս դիտարկվող ժամանակահատվածում նշանակալիորեն բարելավել է իր վարկանիշը: Այս ցուցանիշով վերջին եռյակում են Սյունիքը, Լոռին և Երևանը: Ընդ որում, թե Երևանը և թե Լոռվա մարզը 2001-2004թթ. ընթացքում շարունակաբար մնացել են հետնապահների թվում:

2004թ. դրությամբ մանկամահացությունն ամենացածրն է Արագածոտնի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում: Նկատելի է հատկապես Գեղարքունիքի լուրջ առաջխաղացումը. 2001 թվականին մարզն այս ցուցանիշով 10-րդն էր, 2002-2003-ին՝ 8-րդը, իսկ 2004թ-ին՝ արդեն 3-րդը: Այս ցուցանիշով վարկանիշային աղյուսակի վերջին եռյակում են Սյունիքը, Լոռին և Շիրակը: Ընդ որում, Լոռվա մարզում, ինչպես նաև Երևանում, ի տարբերություն մյուս մարզերի, դիտարկվող ժամանակահատվածում արձանագրվել է մահացության մակարդակի որոշակի աճ:

Խիստ մտահոգիչ պիտի համարել նաև ողջ հանրապետության տարածքում մահացության մակարդակի աճը: Դիշտ է, 2003-2004թթ. ընթացքում այն որոշակիորեն նվազել է, սակայն 2004թ. մակարդակը դեռևս բարձր է 2001թ-ի մակարդակից: Այս միտումը նկատելի է հատկապես Լոռվա, Շիրակի և Տավուշի մարզերում, որտեղ արձանագրվել է դիտարկվող հիվանդություններից մահացության առավել բարձր մակարդակ: Այս հանգամանքն, անկասկած, վկայում է հիշատակված մարզերում բնակչության կյանքի ծանր պայմանների ու առողջապահական ծառայությունների մատուցման հարցում առկա լուրջ թերությունների մասին:

Բնակչության մահացության մակարդակը համեմատաբար բարձր է նաև Երևանում, ինչը ևս լուրջ ուշադրության և դրա հիմքում ընկած պատճառների հանգամանակից ու համակարգված վերլուծության կարիք է զգում:

Բնակչության մահացության ցուցանիշներով համեմատաբար բարվոք վիճակում են գտնվում Կոտայքի, Գեղարքունիքի, Արմավիրի և Արարատի մարզերը, ինչը, սակայն, չի նշանակում, որ այստեղ առողջապահական հիմնախնդիրները լուծված են: Այս արդյունքն ավելի շուտ կարելի է բացատրել նրանով, որ հիշատակված մարզերում գերակշռում է գյուղական բնակչությունը, որը հնարավորություն ունի օգտվելու էկոլոգիապես մաքուր սննդամթերքից, և բացի այդ, նրանց հաջողվում է խուսափել տրանսպորտային միջոցների և արտադրական օբյեկտների գերկուտակման հետևանքով առաջացող բնապահպանական լրջագույն խնդիրներից, ինչպիսիք առկա են, մասնավորապես, Երևանում:

Բնակչության առողջական մակարդակի վրա ներգործող կարևոր ցուցանիշներից է, անկասկած, առողջապահության մատչելիությունը: Մեր վերլուծության շրջանակներում, սակայն, այս ցուցանիշի գնահատականներն օգտագործելը հնարավոր չեղավ, առաջին հերթին այն պատճառով, որ առողջապահության մատչելիության ցուցանիշի դինամիկան ըստ մարզերի բացակայում է: Այս ոլորտում իրականացված վերջին հետազոտության արդյունքում (խոսքը գնում է ՀՀ կառավարության և ՄԱԿ զարգացման ծրագրի համատեղ իրականացված «Աղքատության վրա ազդեցության գնահատման և աղքատամետ քաղաքականության մշակման նպատակով ազգային հզորությունների զարգացում

(ԱՀՌԾ-ի իրականացման շրջանակներում)» ծրագրի շրջանակներում հայրենական փորձագետների կողմից պատրաստված «Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում» զեկույցի մասին, որի հիմքում դրվել են մարդկային զարգացման ազգային հետազոտության արդյունքները¹³) ստացվել են գնահատականներ 2003թ-ի համար, ըստ որի առողջապահությունն առավել մատչելի է Սյունիքի, Վայոց Ձորի, Արմավիրի մարզերում և Երևանում: Այստեղ ուշագրավ է հատկապես այն, որ Կոտայքի և Տավուշի մարզերում առողջապահության մատչելիության ցուցանիշը ստացել է համարժեք գնահատականներ, այն դեպքում, երբ առաջինում մահացության մակարդակը ամենացածրն է, իսկ երկրորդում՝ ամենաբարձրը:

Ինչևիցե, մեր հաշվարկներում առողջապահության մատչելիության գնահատականների փոխարեն կօգտագործենք մարզում բժիշկների թվաքանակի ցուցանիշը, որը, որոշակի վերապահումներով, կարելի է համարել առողջապահության ֆիզիկական մատչելիության մասին պատկերացում տվող ցուցանիշ: Ըստ այդմ, այս ցուցանիշով առաջատարը Երևանն է, որտեղ 1000 բնակչին բաժին ընկնող բժիշկների թվաքանակը մոտ 3-4 անգամ մեծ է մյուս մարզերի համապատասխան ցուցանիշից: Բժիշկների հարաբերական թվաքանակը փոքր է հատկապես Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի մարզերում:

Աղյուսակներ 3 և 4-ում ներկայացված են 1.2 և 1.3 ենթախմբերում ընդգրկված ցուցանիշների դինամիկան և մարզերի վարկանիշը՝ նույն ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 3.

1.2 և 1.3 ենթախմբերի ցուցանիշների դինամիկան

ՀՀ մարզերում 2001-2003թթ.

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
1.2.1	2001	4,1	3,6	2,9	3,8	4,2	3,6	3,9	3,9	2,9	4,8	4,0
	2002	4,4	4,0	3,6	4,3	5,3	4,2	4,3	4,0	3,3	4,5	4,2
	2003	4,8	4,6	3,9	4,8	6,4	5,1	4,7	4,8	3,8	4,8	4,8
	2004	5,4	5,0	4,2	5,7	6,9	4,6	5,4	4,7	5,0	5,0	5,7
1.2.2	2001	0,21	0,09	0,12	0,07	0,06	0,13	0,12	0,14	0,18	0,09	0,07
	2002	0,19	0,08	0,08	0,07	0,04	0,12	0,11	0,12	0,13	0,07	0,04
	2003	0,18	0,05	0,10	0,07	0,04	0,09	0,12	0,11	0,13	0,12	0,07
	2004	0,17	0,07	0,08	0,07	0,03	0,13	0,10	0,10	0,14	0,09	0,06
	2001	19,4	5,7	11,8	11,9	8,7	10,0	9,6	9,5	21,7	8,7	12,3

¹³ «Մարդկային աղքատությունն ու աղքատամետ քաղաքականությունը Հայաստանում» զեկույց, ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակ, հրատարակված է Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնի կողմից, Երևան 2005, էջ 22:

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
1.3.1	2001	19,4	5,7	11,8	11,9	8,7	10,0	9,6	9,5	21,7	8,7	12,3
	2002	19,2	6,2	11,3	11,1	9,3	9,9	9,6	10,7	20,6	20,6	13,1
	2003	19,0	6,4	11,0	11,1	9,7	12,4	10,8	11,8	23,3	12,8	13,8
	2004	19,0	6,5	12,3	11,1	10,3	10,3	9,5	11,2	22,2	12,2	13,9
1.3.2	2001	0,5	1,5	0,7	1,2	2,2	0,6	0,9	0,6	0,8	0,7	2,2
	2002	0,5	1,3	0,7	1,2	2,0	0,6	0,9	0,5	0,8	0,3	1,9
	2003	0,5	1,0	0,5	0,7	3,2	0,6	0,8	0,2	0,7	0,5	1,6
	2004	0,4	2,3	0,8	0,4	3,0	0,6	0,9	0,9	0,9	0,5	0,4
1.3.3	2001	134,5	202,8	180,8	185,7	195,6	173,0	173,7	190,6	161,4	209,5	168,2
	2002	132,6	198,3	176,2	178,8	193,3	161,6	173,5	187,9	158,0	199,1	163,0
	2003	130,3	193,8	170,9	172,9	184,3	151,8	154,4	174,1	149,6	192,7	159,0
	2004	126,5	171,4	163,3	160,7	176,8	154,8	155,9	171,7	142,7	182,6	141,9
1.3.4	2001	9,1	4,7	8,1	5,3	5,4	6,6	7,3	11,3	13,4	11,0	10,1
	2002	8,9	5,7	10,1	5,3	8,0	9,5	10,2	11,8	13,3	11,7	10,7
	2003	8,9	7,6	9,5	5,3	9,4	8,3	10,0	9,7	12,9	11,6	10,6
	2004	8,3	7,1	8,9	5,1	9,4	8,5	9,4	10,1	15,9	17,3	9,1
1.3.5	2001	0,75	0,03	0,02	0,09	0,03	0,05	0,03	0,01	0,03	0,04	0,02
	2002	0,59	0,04	0,14	0,06	0,02	0,02	0,03	0,01	0,04	0,00	0,08
	2003	0,65	0,04	0,08	0,13	0,01	0,03	0,04	0,02	0,04	0,01	0,05
	2004	0,56	0,04	0,11	0,14	0,01	0,04	0,04	0,05	0,06	0,01	0,04

Աղյուսակ 4.

ՀՀ մարզերի վարկանիշներն ըստ 1.2 և 1.3 ենթախմբերի ցուցանիշների (2001-2004թթ.)

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
1.2.1	2001	3	9	11	7	2	8	6	5	10	1	4
	2002	3	9	10	4	1	6	5	8	11	2	7
	2003	3	9	10	4	1	2	8	6	11	5	7
	2004	5	7	11	2	1	10	4	9	8	6	3
1.2.2	2001	11	4	7	2	1	8	6	9	10	5	3
	2002	11	5	6	3	1	8	7	9	10	4	2
	2003	11	2	6	4	1	5	9	7	10	8	3
	2004	11	3	5	4	1	9	7	8	10	6	2
1.3.1	2001	2	10	5	4	9	6	7	8	1	11	3
	2002	3	11	5	6	10	8	9	7	2	1	4

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
	2003	2	11	8	7	10	5	9	6	1	4	3
	2004	2	11	4	7	8	9	10	6	1	5	3
1.3.2	2001	1	9	4	8	10	2	7	3	6	5	11
	2002	2	9	5	8	11	4	7	3	6	1	10
	2003	4	9	2	7	11	5	8	1	6	3	10
	2004	3	10	6	2	11	5	8	9	7	4	1
1.3.3	2001	11	2	6	5	3	8	7	4	10	1	9
	2002	11	2	6	5	3	9	7	4	10	1	8
	2003	11	1	6	5	3	9	8	4	10	2	7
	2004	11	4	5	6	2	8	7	3	9	1	10
1.3.4	2001	5	11	6	10	9	8	7	2	1	3	4
	2002	8	10	6	11	9	7	5	2	1	3	4
	2003	8	10	6	11	7	9	4	5	1	2	3
	2004	9	10	7	11	4	8	5	3	2	1	6
1.3.5	2001	1	7	10	2	8	3	6	11	5	4	9
	2002	1	5	2	4	8	9	7	10	6	11	3
	2003	1	7	3	2	10	8	5	9	6	11	4
	2004	1	6	3	2	9	8	7	5	4	10	11

Դիտարկվող ժամանակահատվածում հանրապետության բոլոր մարզերում նկատելի է ամուսնությունների թվի աճ: Ընդ որում, այն առավել ցայտուն կերպով է դրսևորվել Գեղարքունիքում, Արմավիրում, Տավուշում և Կոտայքում, որոնք էլ այս ցուցանիշով առաջատարներ են հանդիսանում: Համեմատաբար բարձր է նաև Երևանի ցուցանիշը: Այլ է պատկերը Շիրակի, Լոռվա և Արագածոտնի մարզերում, որտեղ 1000 բնակչի հաշվով գրանցվել են ամենաքիչ թվով ամուսնությունները: Ընդ որում, Արագածոտնի մարզը վերջին տարիների ակնհայտ հետնապահն է:

Ամուսնալուծությունների հարաբերական ցուցանիշը ամենացածրն է Գեղարքունիքում: Ճիշտ է, սրանում որոշակի դեր խաղում է մարզի գյուղական բնակավայրերում ավանդական հայկական սկզբունքներին հավատարմությունը, ըստ որոնց ամուսնալուծությունը համարվում է ընտանեկան խնդիրների, հակասությունների լուծման խիստ անցանկալի և անընդունելի գործիք: Այնուհանդերձ, սա չի կարելի սպառնալիքացատրություն համարել և պարզապես պիտի ընդունել, որ այս մարզում փոքր-ինչ ավելի շատ են ամուսնի հիմքի վրա կառուցված ընտանիքները: Ամուսնալուծությունների թիվը փոքր է նաև Արարատի և Տավուշի մարզերում: Առավել շատ ամուսնալուծություններ գրանցվել են Երևանում: Ճիշտ է, դիտարկվող ժամանակահատվածում այս ցուցանիշը ինչպես ողջ

հանրապետությունում, այնպես էլ Երևանում որոշակիորեն նվազել է, սակայն այստեղ այն փոքր-ինչ ավելի բարձր է:

Ինչ վերաբերում է ամուսնալուծություններին, ապա այստեղ առաջատարը Երևանն է: 2004թ. ամուսնալուծությունների թիվն այստեղ կազմել է 17 (100 ամուսնության հաշվով): Առավել քիչ ամուսնալուծություններ գրանցվել են Արագածոտնի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում, ինչը որոշակիորեն վկայում է այդ մարզերում ընտանեկան կապերի ամրության մասին:

Պետական նախադպրոցական հիմնարկներում երեխաների ընդգրկվածության ցուցանիշն ամենացածրն է Արարատի մարզում: Չնայած վերջին տարիների ընթացքում մարզին հաջողվել է որոշակի բարելավում արձանագրել, այնուհանդերձ դա որևէ կերպ չի անդրադարձել նրա վարկանիշի վրա: Ընդ որում այստեղ, ինչպես նաև Գեղարքունիքում, խիստ շատ են պետական նախադպրոցական հիմնարկներում երեխաների հիվանդացության դեպքերը: Դրա պատճառն, անշուշտ, գյուղական համայնքներում մանկ հաստատությունների խիստ սակավությունն է և դրանց նկատմամբ պատկան մարմինների հսկողության անարդյունավետությունը: Այս երկու ցուցանիշներով առավել բարենպաստ դիրքում են գտնվում Երևանը և Սյունիքը, ինչը ևս տեղավորվում է նույն տրամաբանության մեջ:

Տրամազծորեն հակառակ պատկեր է նկատելի հանրակրթական դպրոցներում ընդգրկվածության ցուցանիշի մասով: Երևանում և Սյունիքում այն նվազագույնն է՝ բոլոր մարզերի համեմատությամբ, իսկ մեծամասամբ գյուղական համայնքներից բաղկացած մարզերում այս ցուցանիշը զգալիորեն բարձր է: Սա խոսում է, առաջին հերթին, այդ մարզերի բնակչության կողմից կրթության ստացումը ինչպես հարկն է արժեվորելու մասին, ինչպես նաև, անկասկած, արդյունք է բնակչության կառուցվածքում դպրոցահասակ երեխաների համեմատաբար բարձր տեսակարար կշռի: Այս համատեքստում չի կարելի չնշել նաև դիտարկվող ժամանակահատվածում բոլոր մարզերում աշակերտների թվի նվազման միտումը:

Դիտարկվող ժամանակահատվածում մարզերի մեծ մասում նկատելի է արվեստի, երաժշտական և գեղարվեստի դպրոցների աշակերտների թվի ավելացում, ինչն աչքի է ընկնում հատկապես Երևանում համանման կրթօջախների թվի կրճատման համապատկերում: Ըստ այդմ, այս ցուցանիշով առաջատար են Վայոց Ձորի, Սյունիքի և Շիրակի մարզերը, իսկ Երևանը, Արմավիրի և Արարատի հետ միասին, վարկանիշային աղյուսակի վերջին եռյակում է: 2000-2004թթ. մայրաքաղաքում կրճատվել է նաև քանգարանների այցելուների թիվը, իսկ մարզերում՝ ընդհակառակը, այս ցուցանիշն աճի միտումներ է դրսևորում:

Ստորև բերված աղյուսակ 5-ում ներկայացված են «բնակչության որակ» խմբում ընդգրկված 17 ցուցանիշների համար ստացված կշռային գործակիցները:

Աղյուսակ 5

«Բնակչության որակ» խմբի ցուցանիշների կշռային գործակիցները

1.1.1	Բնակչության բնական աճը	0.14
1.1.2	Մանկամահացության մակարդակը	0.10
1.1.3	Մահացությունը վարակիչ և մակաբուժական հիվանդություններից	0.04
1.1.4.	Մահացությունը չարորակ նորագոյացություններից	0.05
1.1.5.	Մահացությունը արյան շրջանառության համակարգի հիվանդություններից	0.05
1.1.6.	Մահացությունը շնչառական օրգանների հիվանդություններից	0.04
1.1.7.	Մահացությունը մարսողական օրգանների հիվանդություններից	0.04
1.1.8.	Մահացությունը դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից	0.03
1.1.9	Մահացությունը բնածին արատներից	0.03
1.1.10	Բժիշկների քանակը	0.10
1.2.1	Մարգում գրանցված ամուսնությունների թիվը	0.06
1.2.2	Ամուսնալուծությունների թիվը	0.06
1.3.1	Պետական նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված երեխաների թիվը	0.04
1.3.2.	Պետական նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված երեխաների հիվանդացության դեպքերը	0.03
1.3.3	Հանրակրթական դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվը	0.07
1.3.4	Արվեստի, երաժշտական և գեղարվեստի դպրոցներ հաճախող երեխաների թիվը	0.06
1.3.3	Թանգարաններ այցելուների թիվը	0.06

Օգտագործելով վերը նկարագրված կշռային գործակիցները, առաջին խմբի համար գնահատվել է ինտեգրալային սինթետիկ ցուցանիշը, ըստ ՀՀ մարզերի, 2001-2004թթ. համար (տես աղյուսակ 6):

**«Բնակչության որակ» խմբի ինտեգրային սինթետիկ ցուցանիշի
զնահատակաները**

Մարզեր	2001թ.		2002թ.		2003թ.		2004թ.	
	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը
Երևան	0,495	2	0,445	4	0,475	1	0,476	6
Արագածոտն	0,472	6	0,422	5	0,449	8	0,417	7
Արարատ	0,438	7	0,455	3	0,474	2	0,483	4
Արմավիր	0,487	4	0,428	6	0,449	7	0,490	3
Գեղարքունիք	0,460	5	0,414	8	0,461	5	0,533	1
Լոռի	0,310	10	0,253	11	0,292	11	0,270	11
Կոտայք	0,492	3	0,462	2	0,465	3	0,501	2
Շիրակ	0,327	9	0,288	9	0,377	9	0,336	9
Սյունիք	0,413	8	0,416	7	0,463	4	0,403	8
Վայոց Ձոր	0,501	1	0,482	1	0,456	6	0,482	5
Տավուշ	0,307	11	0,274	10	0,293	10	0,322	10
Պարզ միջինը ըստ 11 մարզերի	0.428		0.394		0.423		0.429	

Ստացված արդյունքներից երևում է, որ 2001-2004թթ. ընթացքում հանրապետության հինգ մարզերում (Երևան, Արագածոտն, Լոռի, Սյունիք, Վայոց Ձոր) բնակչության որակը որոշակիորեն նվազել է: Ընդ որում, առավել մեծ անկում է արձանագրվել Արագածոտնում և Լոռիում, ինչի հիմնական պատճառը այս մարզերում շնչառական օրգանների ու արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացության մակարդակի աճն է, դրանից բացի առաջինում կտրուկ նվազել է դպրոց հաճախող երեխաների թիվը, իսկ երկրորդում՝ բժիշկների քանակը:

Հանրապետության մյուս վեց մարզերում տեղի է ունեցել բնակչության որակի աճ, ինչը յուրատեսակ հակակշիռ է հանդիսացել առաջին հինգ մարզերում բնակչության որակի նվազմանը և արդյունքում այս ցուցանիշի միջինը՝ ըստ բոլոր մարզերի, 2004թ-ին մնացել է նույն մակարդակի վրա, ինչ 2001-ին էր գրանցվել:

Բնակչության որակի առավել բարձր աճ արձանագրվել է Գեղարքունիքի մարզում, ինչը, առաջին հերթին, մանկամահացության մակարդակի կրճատման, բնական աճի տեմպերի ավելացման ու նաև՝ արվեստի, երաժշտական դպրոցներում աշակերտների թվի ավելացման հետևանք է: Արդյունքում 2004թ.-ին այս մարզին հաջողվեց նախորդ տարվա համեմատ վեր բարձրանալ ամբողջ 4 կետով և ՀՀ բոլոր մարզերի մեջ զբաղեցնել առաջին հորիզոնականը:

Բնակչության որակով երկրորդը Կոտայքի մարզն է, որը, ինչպես տեսանք, դիտարկվող ցուցանիշների մեծամասնության կտրվածքով բավականաչափ բարձր արդյունքներ է ապահովել դիտարկման բոլոր տարիների ընթացքում:

Երրորդը Արմավիրի մարզն է, որը ևս լուրջ առաջընթաց է արձանագրել 2003թ-ի համեմատ: Դրան առավելապես նպաստել են մանկամահացության մակարդակի նվազումը, բնական աճի ավելացումը, ամուսնությունների թվի աճը և ինչ-որ չափով՝ նաև քանգարաններ այցելումների թվի ավելացումը:

Բացի հիշատակված երեք մարզերից, բնակչության որակը միջինից բարձր է նաև Արարատում, Վայոց Ձորում և Երևանում: Ընդ որում, 2004-ին 2003թ-ի համեմատ Երևանի դիրքը նկատելիորեն վատացել է, քանի որ դրական աճ արձանագրած ցուցանիշների ազդեցությունը չեզոքացվել է անկում գրանցած ցուցանիշների կողմից:

Բնակչության որակն առավել ցածր է Շիրակի, Տավուշի և Լոռվա մարզերում: Ընդ որում, եթե Տավուշի մարզում 2004թ-ին 2003-ի համեմատ նկատելի է բացարձակ ցուցանիշի որոշակի բարելավում, ապա նույնը չի կարելի ասել մյուս երկու մարզերի համար: Լոռվա մարզի դեպքում, ինչպես արդեն ասացինք, բնակչության որակի նվազման հիմնական պատճառը բնական աճի տեմպերի նվազումն է, ամուսնությունների թվի կրճատումը և ամուսնալուծությունների հարաբերական մեծության աճը, իսկ Շիրակի մարզում՝ մանկամահացության, վարակիչ և մակաբուժական, սիրտ-անոթային ու շնչառական համակարգերի հիվանդություններից և նորագոյացություններից մահացության մակարդակի աճն է, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում աշակերտների թվի նվազումը:

Տնտեսական բարեկեցությունը ՀՀ մարզերում

ՀՀ մարզերում բնակչության տնտեսական բարեկեցության մակարդակի գնահատման համար մեր կողմից օգտագործվել են 11 ցուցանիշներ: Ստորև ներկայացված են դրանց արժեքների գնահատման ընդհանուր սկզբունքները:

2.1. համախառն արդյունքը մեկ շնչի հաշվով (հազար դրամ).

Քանի որ հանրապետության մարզերի կտրվածքով ՀՆԱ ցուցանիշի հաշվարկ չի տրվում, ուստի մենք որոշեցինք որպես մարզի տնտեսական ներուժի գնահատական օգտագործել արդյունաբերության, շինարարության և գյուղատնտեսության ոլորտների համախառն արդյունքների հանրագումարը:

2.2 արդյունաբերության տեսակարար կշիռը համախառն արդյունքում

Այս ցուցանիշի արժեքները գնահատվել են մարզում արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) հարաբերելով համախառն արդյունքի ցուցանիշի վրա (որը, ինչպես նշվեց, գնահատվում է որպես արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության համախառն արդյունքների հանրագումար):

2.3. բնակչությանը մատուցված ծառայություններ (մեկ շնչի հաշվով, հազար դրամ)

Այս ցուցանիշի գնահատման նպատակով մարզի բնակչությանը մատուցված բոլոր տեսակի ծառայությունների (կենցաղային, տրանսպորտային, կապի, բնակարանային տնտեսության, կուլուրային, մշակութային և այլն) ծավալը բաժանվել է բնակչության թվի վրա:

2.4. մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում

Այս ցուցանիշի կիրառման նպատակը մարզի արդյունաբերական պոտենցիալի գնահատականի ճշգրտումն է: Հանրապետությունում կան մարզեր, որտեղ արդյունաբերական արտադրանքի ծավալը, մարզի մեկ բնակչի հաշվով, բավականաչափ մեծ է, սակայն դա հաջողվում է ապահովել հանքագործական արդյունաբերության կամ էլ էլեկտրաէներգետիկայի հաշվին: Ըստ այդմ էլ, իրական արդյունաբերական պոտենցիալի գնահատման նպատակով ներմուծվում է լրացուցիչ փոփոխական, որով փորձ է արվում արդյունքային ցուցանիշի ստացման ժամանակ ուժեղացնել մշակող արդյունաբերության ազդեցությունը և բացի այդ՝ շեշտել դրա կարևորությունը մարզի տնտեսական զարգացման համար:

2.5. միջին ամսական հարաբերական աշխատավարձը.

Միջին ամսական աշխատավարձի հարաբերական մեծության ստացման համար միջին ամսական աշխատավարձը բաժանվել է մարզում նվազագույն պարենային զամբյուղի արժեքի վրա: Ըստ այդմ, քանի որ ՀՀ մարզերի համար նվազագույն

պարենային և սպառողական զամբյուղների արժեքները չեն հաշվարկվում, ուստի դա արվել է մեր կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված պարենային զամբյուղի կազմն ու կառուցվածքը¹⁴: Ընդ որում, դրանից դուրս են թողնվել սննդամթերքների այն տեսակները, որոնց գները մարզերի կտրվածքով չեն հաշվառվում կամ հրապարակվում: Ըստ այդմ, մեր կողմից հաշվարկված պարենային զամբյուղն ունի հետևյալ կառուցվածքը (աղյուսակ 7):

Աղյուսակ 7.

Նվազագույն պարենային զամբյուղի կառուցվածքը (ամսական)

Հաց	7.5 կգ
Տավարի միս	3 կգ
Կարագ	0.9 կգ
Պանիր	0.75 կգ
Կարտոֆիլ	7.5 կգ
Կաղամբ	4.5 կգ
Գլուխ սոխ	4.5 կգ
Խնձոր	6 կգ
Շաքար	1.5 կգ
Չու	15 հատ
Բուսական յուղ	0.6 լիտր

Վերը բերված կառուցվածքը հիմք ընդունելով, մեր կողմից հաշվարկվել է նվազագույն պարենային զամբյուղի ամսական արժեքը ըստ ՀՀ մարզերի: Ստացված արդյունքները բերված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

Նվազագույն պարենային զամբյուղի ամսական արժեքը (դրամ)

Մարզեր	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Երևան	13511	16651	15704	16447
Արագածոտն	12735	14076	15983	15818
Արարատ	12600	14700	14600	16044
Արմավիր	12650	14754	14613	15372
Գեղարքունիք	12270	13620	14138	14895
Լոռի	12065	13362	14640	14818
Կոտայք	12393	13264	13985	14754
Շիրակ	13297	14931	15053	16630
Սյունիք	12025	13249	14500	14955
Վայոց Ձոր	13358	14225	15330	15075
Տավուշ	12636	13451	15323	15084

¹⁴ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005թ. հունվար-սեպտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց. ՀՀ ԱՎԾ, Երևան, 2005, էջ 199:

Այս խմբում ընդգրկված մյուս ցուցանիշներն են.

2.6. սննդամթերքի վրա արվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր սպառողական ծախսերում,

2.7. մեկ բնակչի ապահովվածությունը բնակմակերեսով (մ²),

2.8. բնակարան ստանալու համար մարզպետարաններում և

քաղաքապետարաններում հերթագրված ընտանիքների թիվը (1000 բնակչի հաշվով),

2.9. տարվա ընթացքում շահագործման հանճնված բնակելի տների ընդհանուր (օգտակար) մակերեսը, 1000 բնակչի հաշվով,

2.10. գազաֆիկացված բնակելի տների և բնակարանների տեսակարար կշիռը մարզում առկա բնակելի տների և բնակարանների ընդհանուր թվում,

2.11. հեռախոսային ապարատների քանակը մարզի մեկ բնակչի հաշվով:

Աղյուսակներ 9 և 10-ում ներկայացված են «Տնտեսական բարեկեցություն» խմբի ցուցանիշների արժեքները ՀՀ մարզերի կտրվածքով և մարզերի վարկանիշը՝ ըստ յուրաքանչյուր ցուցանիշի՝ 2001-2004թթ. ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 9.

**Տնտեսական բարեկեցության ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի
(2001-2004թթ.)**

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Ճեղքաձև Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
2.1	2001	198,2	214,7	228,2	293,9	247,4	203,9	347,2	179,7	416,0	473,6	200,4
	2002	250,0	275,2	308,5	312,0	278,6	223,6	319,8	217,6	445,3	390,9	244,5
	2003	344,1	297,9	337,0	303,4	343,1	255,3	401,5	244,4	573,8	451,1	233,5
	2004	423,6	344,9	404,2	371,6	390,7	331,7	406,6	240,6	987,5	565,3	276,8
2.2	2001	0,70	0,11	0,25	0,27	0,09	0,26	0,58	0,19	0,40	0,11	0,10
	2002	0,58	0,13	0,37	0,28	0,12	0,26	0,57	0,18	0,43	0,15	0,10
	2003	0,55	0,19	0,41	0,25	0,16	0,26	0,52	0,17	0,47	0,14	0,11
	2004	0,51	0,13	0,38	0,26	0,21	0,34	0,52	0,19	0,59	0,15	0,12
2.3	2001	129,8	16,3	20,0	17,7	20,6	22,5	25,2	24,4	20,0	20,1	19,6
	2002	136,4	16,3	20,1	17,9	21,0	22,6	25,3	24,7	20,4	22,2	19,6
	2003	153,8	16,3	21,2	21,3	21,1	22,8	25,3	27,3	21,2	22,2	19,7
	2004	158,1	32,6	26,4	27,3	24,5	27,4	34,7	38,7	23,9	21,0	20,4
2.4	2001	0,84	0,76	0,88	0,25	0,80	0,88	0,35	0,68	0,12	0,93	0,78
	2002	0,82	0,81	0,91	0,23	0,43	0,85	0,49	0,71	0,10	0,85	0,75
	2003	0,83	0,87	0,90	0,34	0,26	0,85	0,48	0,70	0,07	0,83	0,78
	2004	0,84	0,82	0,91	0,35	0,27	0,89	0,50	0,71	0,05	0,76	0,81

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
2.5	2001	2,20	1,06	1,25	1,80	1,29	1,59	1,96	1,16	2,07	1,17	1,20
	2002	1,90	1,27	1,51	1,66	1,51	1,61	2,33	1,24	2,17	1,16	1,33
	2003	2,49	1,45	1,90	2,03	1,94	1,82	2,80	1,58	2,60	1,52	1,51
	2004	3,02	1,91	2,16	2,40	2,33	2,41	3,20	2,00	3,37	2,06	2,08
2.6	2001	0,62	0,79	0,74	0,82	0,71	0,71	0,77	0,73	0,74	0,72	0,78
	2002	0,61	0,77	0,72	0,80	0,69	0,69	0,75	0,72	0,72	0,70	0,77
	2003	0,60	0,76	0,65	0,83	0,71	0,70	0,79	0,74	0,78	0,72	0,67
	2004	0,50	0,66	0,62	0,65	0,69	0,60	0,68	0,55	0,63	0,59	0,62
2.7	2001	16,9	29,6	20,6	23,8	24,4	21,7	23,4	19,0	22,0	24,1	23,6
	2002	17,0	30,3	20,8	23,9	24,2	22,1	23,8	19,3	22,0	24,6	23,6
	2003	17,2	29,1	20,8	24,0	24,3	22,5	24,2	19,6	22,0	24,8	23,8
	2004	17,5	28,3	20,8	24,2	24,5	22,1	22,4	20,9	21,9	25,3	24,2
2.8	2001	5,4	1,2	10,8	4,1	3,6	15,6	3,2	57,3	37,6	1,5	8,1
	2002	5,2	1,1	11,0	1,3	3,2	13,4	3,0	31,2	37,6	1,2	9,2
	2003	5,9	1,2	11,1	1,3	3,3	17,0	2,3	28,4	37,5	0,8	8,4
	2004	5,4	2,3	11,2	1,3	3,7	16,4	2,3	24,6	37,5	0,8	6,2
2.9	2001	85,8	51,9	24,9	22,1	50,0	30,5	44,4	144,7	4,8	19,6	48,2
	2002	114,5	168,0	15,7	29,5	47,2	117,4	24,0	238,0	0,0	10,7	31,6
	2003	204,5	73,3	15,0	28,3	44,7	250,1	37,8	604,9	0,0	0,0	13,1
	2004	199,6	123,3	24,5	31,7	28,3	17,2	27,6	37,4	62,2	0,0	14,2
2.10	2001	0,07	0,04	0,24	0,21	0,33	0,16	0,18	0,24	0,09	0,01	0,16
	2002	0,09	0,06	0,27	0,26	0,37	0,18	0,20	0,27	0,11	0,13	0,17
	2003	0,15	0,10	0,32	0,35	0,46	0,26	0,27	0,37	0,14	0,24	0,23
	2004	0,27	0,16	0,39	0,45	0,53	0,38	0,38	0,58	0,23	0,29	0,27
2.11	2001	0,24	0,10	0,10	0,10	0,12	0,14	0,14	0,08	0,17	0,18	0,20
	2002	0,25	0,10	0,10	0,10	0,12	0,14	0,15	0,09	0,18	0,20	0,20
	2003	0,26	0,10	0,10	0,11	0,13	0,15	0,15	0,09	0,18	0,22	0,18
	2004	0,27	0,10	0,11	0,11	0,13	0,16	0,16	0,10	0,19	0,22	0,19

ՀՀ մարզերի վարկանիշերն ըստ տնտեսական բարեկեցության ցուցանիշների
(2001-2004թթ.)

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
2.1	2001	10	7	6	4	5	8	3	11	2	1	9
	2002	8	7	5	4	6	10	3	11	1	2	9
	2003	4	8	6	7	5	9	3	10	1	2	11
	2004	3	8	5	7	6	9	4	11	1	2	10
2.2	2001	1	9	6	4	11	5	2	7	3	8	10
	2002	1	9	4	5	10	6	2	7	3	8	11
	2003	1	7	4	6	9	5	2	8	3	10	11
	2004	3	10	4	6	7	5	2	8	1	9	11
2.3	2001	1	11	8	10	5	4	2	3	7	6	9
	2002	1	11	8	10	6	4	2	3	7	5	9
	2003	1	11	8	6	9	4	3	2	7	5	10
	2004	1	4	7	6	8	5	3	2	9	10	11
2.4	2001	4	7	3	10	5	2	9	8	11	1	6
	2002	4	5	1	10	6	2	8	7	11	3	6
	2003	5	2	1	9	10	3	8	7	11	4	6
	2004	3	4	1	9	10	2	8	7	11	6	5
2.5	2001	1	11	7	4	6	5	3	10	2	9	8
	2002	3	8	7	4	6	5	1	9	2	11	10
	2003	3	11	6	4	5	7	1	8	2	9	10
	2004	3	11	7	5	6	4	2	10	1	9	8
2.6	2001	1	10	6	11	2	3	8	5	7	4	9
	2002	1	10	7	11	3	2	8	5	6	4	9
	2003	1	8	2	11	5	4	10	7	9	6	3
	2004	1	9	6	8	11	4	10	2	7	3	5
2.7	2001	11	1	9	4	2	8	6	10	7	3	5
	2002	11	1	9	4	3	7	5	10	8	2	6
	2003	11	1	9	5	3	7	4	10	8	2	6
	2004	11	1	10	4	3	7	6	9	8	2	5
2.8	2001	6	1	8	5	4	9	3	11	10	2	7
	2002	6	1	8	3	5	9	4	10	11	2	7
	2003	6	2	8	3	5	9	4	10	11	1	7
	2004	6	4	8	2	5	9	3	10	11	1	7
2.9	2001	2	3	8	9	4	7	6	1	11	10	5
	2002	4	2	9	7	5	3	8	1	11	10	6
	2003	3	4	8	7	5	2	6	1	11	10	9
	2004	1	2	8	5	6	9	7	4	3	11	10

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
2.10	2001	9	10	2	4	1	7	5	3	8	11	6
	2002	10	11	2	4	1	6	5	3	9	8	7
	2003	9	11	4	3	1	6	5	2	10	7	8
	2004	8	11	4	3	2	5	6	1	10	7	9
2.11	2001	1	8	10	9	7	6	5	11	4	3	2
	2002	1	10	9	8	7	6	5	11	4	2	3
	2003	1	10	9	8	7	6	5	11	3	2	4
	2004	1	10	9	8	7	5	6	11	3	2	4

Համախառն արդյունքի ցուցանիշով հանրապետությունում ակնհայտ առաջատար է Սյունիքի մարզը (մեկ բնակչի հաշվով 987.5 հազար դրամ), ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում ցուցանիշի ընդհանուր աճը կազմել է 2.4 անգամ, որով ևս Սյունիքի մարզը գերազանցում է մյուս բոլոր մարզերին: Սյունիքի այս հաջողությունը, իհարկե, միանգամայն տրամաբանական է, եթե հաշվի առնենք մարզում խոշոր արտադրությունների (առաջին հերթին՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի) առկայության փաստը: Այս ցուցանիշով երկրորդը Վայոց Ձորի մարզն է, իսկ երրորդ տեղում է Երևանը: Նրանից փոքր-ինչ հետ են մնում Կոտայքի և Արագածոտնի մարզերը: ՀՀ տարածքում ամենափոքր համախառն արդյունքը թողարկվում է Շիրակի, Տավուշի և Լոռվա մարզերում, որտեղ մեկ բնակչի հաշվով տարեկան համախառն արդյունքը կազմում է ընդամենը 283 հազար դրամ:

Մարզի համախառն արդյունքում արդյունաբերության տեսակարար կշռով աչքի են ընկնում Սյունիքը, Կոտայքը և Երևանը, ընդ որում, վերջին երկուսում, ի տարբերություն Սյունիքի, նկատելի է այս ցուցանիշի որոշակի նվազման միտումը: Գիտարկվող ցուցանիշով վերջին տեղերն են զբաղեցնում Տավուշի, Արարատի և Շիրակի մարզերը, որտեղ համախառն արդյունքի զգալի մասն ապահովվում է գյուղատնտեսական արտադրանքի հաշվին:

Ծառայությունների ոլորտի զարգացման մակարդակով անվիճելի առաջատարը Երևանն է: Այստեղ մեկ բնակչի հաշվով մատուցված ծառայությունների տարեկան ծավալը 158 հազար դրամ է, այն դեպքում, երբ մյուս 10 մարզերի միջինը կազմում է ընդամենը 27.7 հազար դրամ: Այս ոլորտը փոքր է հատկապես Տավուշում, Վայոց Ձորում և Սյունիքում:

Մարզի տնտեսական պոտենցիալի գնահատման տեսանկյունից, մեր մոտեցմամբ, կարևոր ցուցանիշ է մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը արդյունաբերական

արտադրանքի կառուցվածքում: Այս ցուցանիշով առաջատար են Արագածոտնը, Լոռին, Արարատը և Երևանը: Ընդ որում, եթե առաջին երեքում դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում այս ցուցանիշը որոշակիորեն ավելացել է, ապա Երևանում այն փոքր-ինչ նվազել է: Այստեղ ուշագրավ է հատկապես ցուցանիշի խիստ ցածր արժեքը Սյունիքի մարզում՝ ընդամենը 0.045, ինչը ևս մեկ անգամ հավաստում է, որ Սյունիքում հանքագործական արդյունաբերությունից բացի, այլ նշանակալի արտադրություններ չկան:

Միջին ամսական հարաբերական աշխատավարձը բոլոր մարզերում 2001-2004թթ. ընթացքում որոշակիորեն աճել է: Այն ամենաբարձրն է Սյունիքում, Կոտայքում և Երևանում: Մարզի նվազագույն պարենային զամբյուղի նկատմամբ ամենացածր աշխատավարձը Արարատում է, նրանից քիչ են տարբերվում Վայոց Ձորի, Տավուշի և Արագածոտնի մարզերը:

Պարենամթերքի ձեռքբերման համար իրականացվող ծախսերի տեսակարար կշռի ցուցանիշը հանդիսանում է բնակչության կենսամակարդակն արտացոլող անուղղակի ցուցիչ: Կարելի է համարել, որ որքան սպառողական ծախսերի կառուցվածքում մեծ է պարենամթերքի վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռը, այնքան ցածր է բնակչության կենսամակարդակը և հետևաբար՝ նաև բարեկեցությունը: Հատկանշական է այն, որ այս ցուցանիշը 2001-2004թթ. ընթացքում բոլոր մարզերում դրսևորել է անկման միտում, ինչը, բնականաբար, վկայում է աղքատության նվազման և բնակչության կենսամակարդակի որոշակի աճի մասին: Աչքի են զարնում նաև այս ցուցանիշով Երևանի և մնացած մարզերի միջև էական տարբերությունները: Այսպես, Երևանում տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում սննդամթերքի բաժինը 50%-ից պակաս է, այն դեպքում, երբ մյուս մարզերում այս ցուցանիշը կազմում է միջինում 63%:

Հանրապետության բնակչության բնակարանային ապահովվածության ցուցանիշը ևս, չնայած աննշան, սակայն բարելավման միտումներ է դրսևորում: Մեկ բնակչին բաժին ընկնող բնակելի մակերեսը 2004թ. ըստ բոլոր մարզերի կազմել է միջինում 23.0մ²՝ 2001թ.-ի 22.6մ² դիմաց: Ընդ որում այս ցուցանիշով առաջատարը Արագածոտնի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերն են ու դա միանգամայն հասկանալի է, քանի որ այստեղ գերակշռում են գյուղական համայնքները, որտեղ ընտանիքները բնակվում են զլխավորապես առանձնատներում: Այս տեղանկյունից կարելի է տրամաբանական համարել նաև այն, որ դիտարկվող ցուցանիշով հետնապահը Երևանն է, որտեղ մեկ բնակչին բաժին է ընկնում ընդամենը 17.5մ² բնակմակերես:

Բնակարանի ստացման համար մարզպետարաններում և քաղաքապետարաններում հերթագրված ընտանիքների ամենամեծ թիվը Սյունիքում է: Սա կարելի է բացատրել

առաջին հերթին մարզի բնակչության համեմատաբար փոքր թվով, ինչի արդյունքում այս հարաբերական ցուցանիշը ստացվել է բավականին մեծ: Այնուհանդերձ, սա չի նշանակում, որ մարզում բնակարանային խնդիր չկա: Այս ցուցանիշով Սյունիքի մարզին հաջորդում են Շիրակն ու Լոռին, որտեղ չնայած վերջին տարիներին ծավալած լայնամասշտաբ շինարարական աշխատանքներին, դեռևս շատ են ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքները:

Մարզերում բնակարանային ֆոնդի համալրման տեմպերն ամենաբարձրն են Երևանում: Այստեղ 2004թ-ին 1000 բնակչի հաշվով շահագործման է հանձնվել շուրջ 200 քառ. մետր օգտակար մակերեսով բնակելի տարածք: Բնակարանային շինարարության հարաբերական ծավալներով Երևանին հաջորդում են Արագածոտնի և Սյունիքի մարզերը: Չի կարելի չնկատել, որ ընդհանուր առմամբ հանրապետության մարզերում ընթացող բնակարանային շինարարության ծավալները դիտարկվող ժամանակահատվածում անկայուն վարքագիծ են դրսևորել, ինչը աչքի է ընկնում, օրինակ, Սյունիքի մարզի դեպքում, որտեղ 2004թ-ին 1000 բնակչին բաժին ընկնող շահագործման հանձնված բնակմակերեսը կազմել է 62.2 քառ. մետր, այն դեպքում, երբ դրան նախորդող երկու տարիների ընթացքում այստեղ գրեթե ոչ մի բնակարանային շինարարություն չի իրականացվել: Աչքի է ընկնում նաև Լոռվա ու Շիրակի մարզերում բնակարանաշինության դինամիկան: Այստեղ 2003-2004 թթ. ընթացքում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը կրճատվել է մոտ 20 անգամ, ինչն, անշուշտ, արդյունք է Լինսի հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացված լայնամասշտաբ շինարարական ծրագրերի ավարտով:

Մարզերում գազաֆիկացման աստիճանը բնութագրող ցուցանիշը դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում ակնհայտ աճ է արձանագրել, ինչն առավել ակնառու է հատկապես Վայոց Ձորի մարզում (2001-2004թթ. գազաֆիկացված բնակելի տների և բնակարանների թիվն այստեղ ավելացել է շուրջ 23 անգամ), Երևանում (4 անգամ) և Արագածոտնում (3.9 անգամ):

Գազամատակարարում ունեցող բնակարանների և բնակելի տների տեսակարար կշռով առաջատարը Շիրակի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերն են, իսկ վերջին եռյակը կազմում են Երևանը, Սյունիքն ու Արարատը:

Մեկ բնակչի հաշվով հեռախոսային ապարատների թվով աչքի են ընկնում Երևանն ու Վայոց Ձորի մարզը (համապատասխանաբար 0.27 և 0.22 արժեքով): Գյուղական համայնքների գերակշռություն ունեցող մարզերում (Արագածոտն, Գեղարքունիք և այլն) այս ցուցանիշը նկատելիորեն ցածր է, ինչը վկայում է նշված մարզերում տեխնոլոգիական ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակի մասին:

Ներկայացված տնտեսական բարեկեցության ցուցանիշների համար հաշվարկված կշռային գործակիցները բերված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11.

Տնտեսական բարեկեցության ցուցանիշների կշռային գործակիցները

	Ցուցանիշը	Կշիռը
2.1	Համախառն արդյունքը մեկ շնչի հաշվով	0.09
2.2	Արդյունաբերության կշիռը համախառն արդյունքում	0.08
2.3	Բնակչությանը մատուցված ծառայությունները	0.07
2.4	Մշակող արդյուն կշիռը արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում	0.10
2.5	Միջին ամսական հարաբերական աշխատավարձը	0.14
2.6	Սննդամթերքի վրա արվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր սպառողական ծախսերում	0.12
2.7	Մեկ բնակչի ապահովվածությունը բնակմակերեսով	0.12
2.8	Բնակարան ստանալու համար մարզպետարաններում և քաղաքապետարաններում հերթագրված ընտանիքների թիվը	0.04
2.9	Շահագործման հանձնված բնակմակերես	0.07
2.10	Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ	0.09
2.11	Հեռախոսային ապարատների քանակը, 1բն. հաշվով	0.08

Հիմք ընդունելով այս կշռային գործակիցները, հաշվարկվել են մարզերի տնտեսական բարեկեցության մակարդակը գնահատող սինթետիկ ինտեգրալային ցուցանիշի արժեքները (աղյուսակ 12):

Ինչպես երևում է ստացված գնահատականներից, հանրապետության բոլոր մարզերում դիտարկվող ժամանակահատվածում արձանագրվել է տնտեսական բարեկեցության աճ: Ընդհանուր աճի տեմպը ըստ բոլոր մարզերի կազմել է 44%, ընդ որում առավելագույն աճը գրանցվել է Սյունիքում (79%), ինչը հիմնականում բացատրվում է համախառն արդյունքի և միջին հարաբերական աշխատավարձի աճով, սպառողական ծախսերի կառուցվածքում սննդամթերքի տեսակարար կշռի էական նվազեցմամբ, շահագործման հանձնված բնակմակերեսի ավելացմամբ, բնակարանների և բնակելի տների գազաֆիկացման ծավալների ընդլայնմամբ: Այս ամենի արդյունքում մարզին հաջողվել է 2003թ-ի համեմատությամբ վարկանիշային աղյուսակով վեր բարձրանալ յոթ կետով և զբաղեցնել երկրորդ հորիզոնականը:

**Տնտեսական բարեկեցության ինտեգրալային սինթետիկ ցուցանիշի
զնահատականները**

Մարզեր	2001թ.		2002թ.		2003թ.		2004թ.	
	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը
Երևան	0,527	1	0,529	1	0,613	1	0,694	1
Արագածոտն	0,296	8	0,365	5	0,369	6	0,437	7
Արարատ	0,306	7	0,363	6	0,420	4	0,457	6
Արմավիր	0,272	10	0,283	11	0,317	11	0,419	9
Գեղարքունիք	0,345	4	0,332	7	0,354	8	0,401	11
Լոռի	0,345	5	0,382	3	0,436	3	0,487	5
Կոտայք	0,385	2	0,424	2	0,458	2	0,519	3
Շիրակ	0,249	11	0,301	10	0,347	10	0,416	10
Սյունիք	0,296	9	0,316	9	0,351	9	0,529	2
Վայոց Ձոր	0,358	3	0,373	4	0,408	5	0,493	4
Տավուշ	0,312	6	0,320	8	0,364	7	0,431	8
Պարզ միջինը ըստ 11 մարզերի	0,334		0,362		0,403		0,480	

Տնտեսական բարեկեցության մակարդակով առաջինը, ինչպես և կարելի էր ակնկալել, Երևանն է, որին հաջողվել է իր առաջատար դիրքը պահպանել դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում: Վերլուծության մեջ ներառված գրեթե բոլոր ցուցանիշներով Երևանը տեղ է զբաղեցնում առաջին եռյակում: Բացառություն են կազմում թերևս միայն բնակելի մակերեսով քաղաքի բնակչության ապահովվածության և զազաֆիկացման տեմպերը բնութագրող ցուցանիշները, որոնցով Երևանը ՀՀ մարզերի շարքում համապատասխանաբար 11-րդն է և 8-րդը, ինչը պատճառները մենք արդեն քննարկեցինք:

Սույն ցուցանիշով հանրապետության մարզերի վարկանիշային աղյուսակի եզրափակիչ եռյակում տեղ են գտել Արմավիրը, Շիրակն ու Գեղարքունիքը:

Արմավիրում չնայած 2.5, 2.7, 2.8 և 2.10 ցուցանիշներով բավականաչափ բարձր արդյունքներ են արձանագրվել, սակայն պարենամթերքի վրա արվող ծախսերի

տեսակարար կշռով և հեռախոսակապով ապահովված տնային տնտեսությունների թվով ստորին տեղեր զբաղեցնելու պատճառով հանրագումարում մարզը միայն 9-րդն է:

Շիրակում խիստ անբարենպաստ է իրավիճակը հատկապես մեկ բնակչին ընկնող համախառն թողարկման (11-րդ տեղ), միջին ամսական հարաբերական աշխատավարձի (11-րդ տեղ), բնակչության բնակարանային ապահովվածության (9-րդ տեղ), մեկ բնակչին ընկնող հեռախոսային ապարատների թվի (11-րդ տեղ) ցուցանիշներով:

Ինչ վերաբերում է Գեղարքունիքին, ապա այստեղ համեմատաբար բարձր արդյունքներ են արձանագրվել միայն գազաֆիկացման ծավալների և բնակչության բնակարանային ապահովվածության ցուցանիշների մասով: Մինչդեռ անբարենպաստ վիճակում է գտնվում ծառայությունների ոլորտը, բարձր է սննդամթերքի վրա արվող ծախսերի տեսակարար կշիռը ու նաև համեմատաբար թերզարգացած է մշակող արդյունաբերությունը: Այս ամենի արդյունքում մարզը տնտեսական բարեկեցության մակարդակով հանրապետության մարզերի շարքում վերջին տեղում է:

Սոցիալական բարեկեցությունը ՀՀ մարզերում

ՀՀ մարզերում բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակի գնահատման համար մեր կողմից օգտագործվել են հետևյալ 8 ցուցանիշները:

- 3.1. գործազրկության մակարդակը, որը հաշվարկված է որպես մարզում գրանցված գործազուրկների թվի և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի հարաբերություն,**
- 3.2. մարզում կենսաթոշակառուների ընդհանուր թվի և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի հարաբերությունը,**
- 3.3. մարզում նպաստառու ընտանիքների թվի հարաբերակցությունը մարզի ընդհանուր բնակչության նկատմամբ,**
- 3.4. աշխատանքային պրոցեսում արտադրական վնասվածք ստացած անձանց թիվը (տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ),**
- 3.5. քրեական հանցագործությունների թիվը (1000 բնակչի հաշվով),**
- 3.6. տնտեսական հանցագործությունների թիվը (1000 բնակչի հաշվով),**
- 3.7. վարչական իրավախախտումների թիվը (1000 բնակչի հաշվով),**
- 3.5. միգրացիայի մնացորդը (1000 բնակչի հաշվով):**

Աղյուսակներ 12 և 13-ում արտացոլված են վերը նշված ցուցանիշների արժեքների դինամիկան ըստ ՀՀ մարզերի և վերջիններիս վարկանիշերը, 2001-2004թթ. ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 12.

Սոցիալական բարեկեցության ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի (2001-2004թթ.)

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարմավհանրապետություն	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Շավիշ
3.1	2001	0,11	0,02	0,05	0,06	0,06	0,16	0,08	0,23	0,21	0,05	0,07
	2002	0,11	0,02	0,05	0,05	0,06	0,18	0,08	0,25	0,22	0,06	0,07
	2003	0,09	0,02	0,04	0,05	0,06	0,18	0,07	0,24	0,21	0,06	0,07
	2004	0,08	0,02	0,03	0,04	0,05	0,18	0,06	0,21	0,20	0,06	0,06
3.2	2001	0,45	0,29	0,32	0,32	0,35	0,42	0,32	0,40	0,41	0,34	0,44
	2002	0,52	0,34	0,36	0,36	0,38	0,48	0,40	0,44	0,44	0,38	0,51
	2003	0,53	0,35	0,37	0,34	0,37	0,48	0,41	0,45	0,42	0,38	0,52
	2004	0,57	0,35	0,38	0,33	0,36	0,48	0,45	0,45	0,43	0,39	0,53
3.3	2001	0,04	0,04	0,06	0,03	0,05	0,09	0,04	0,11	0,05	0,04	0,07
	2002	0,04	0,05	0,06	0,03	0,05	0,09	0,04	0,11	0,05	0,05	0,08
	2003	0,04	0,05	0,04	0,03	0,06	0,11	0,04	0,11	0,06	0,06	0,07
	2004	0,04	0,05	0,04	0,02	0,06	0,11	0,04	0,11	0,05	0,05	0,08

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
3.4	2001	0,11	0,01	0,07	0,02	0,00	0,04	0,02	0,00	0,01	0,89	0,02
	2002	0,08	0,01	0,13	0,00	0,00	0,15	0,13	0,01	0,00	1,08	0,00
	2003	0,07	0,00	0,08	0,17	0,01	0,03	0,04	0,02	0,02	1,07	0,00
	2004	0,06	0,00	0,00	0,02	0,10	0,09	0,03	0,03	0,51	0,11	0,00
3.5	2001	2,77	1,34	1,38	1,69	1,41	2,29	1,80	2,57	2,30	1,48	1,79
	2002	2,92	1,35	1,33	1,26	1,05	2,07	1,63	2,72	2,57	1,31	1,51
	2003	2,63	1,03	1,05	1,19	0,93	1,86	1,77	1,77	1,65	1,04	1,29
	2004	2,30	0,76	1,19	1,36	0,79	1,66	1,51	2,07	1,38	1,06	1,16
3.6	2001	0,19	0,07	0,14	0,11	0,09	0,16	0,15	0,27	0,50	0,20	0,27
	2002	0,22	0,12	0,12	0,09	0,05	0,21	0,09	0,25	0,49	0,21	0,13
	2003	0,14	0,05	0,05	0,04	0,04	0,07	0,13	0,15	0,12	0,18	0,03
	2004	0,12	0,03	0,07	0,05	0,04	0,05	0,11	0,17	0,10	0,18	0,03
3.7	2001	85,7	14,2	21,0	5,0	18,4	14,8	15,3	47,3	37,4	12,4	20,0
	2002	93,4	14,4	18,1	2,1	27,0	19,6	18,4	46,7	42,9	15,0	23,6
	2003	93,6	15,5	7,7	3,2	15,7	16,8	27,6	42,4	37,4	13,1	17,5
	2004	129,8	16,1	9,4	5,3	20,7	18,7	20,7	48,1	35,2	15,4	15,3
3.8	2001	-2,6	-2,9	-2,5	-2,2	-4,2	-5,7	-4,4	-2,8	-3,2	-2,9	-3,3
	2002	-2,5	-2,5	-2,2	-1,5	-1,9	-5,8	-3,8	-3,7	-1,8	-5,5	-1,9
	2003	-1,9	-1,7	-1,5	-1,4	-2,5	-4,4	-1,8	-4,1	-2,4	-5,7	-2,5
	2004	-1,9	-2,3	-1,8	-1,8	-3,4	-4,5	-1,2	-5,0	-3,3	-3,0	-2,0

Աղյուսակ 13.

«Ն մարզերի վարկանիշերն ըստ սոցիալական բարեկեցության ցուցանիշների (2001-2004թթ.)»

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
3.1	2001	8	1	2	4	5	9	7	11	10	3	6
	2002	8	1	2	3	5	9	7	11	10	4	6
	2003	8	1	2	3	5	9	6	11	10	4	7
	2004	8	1	2	3	4	9	5	11	10	6	7
3.2	2001	11	1	2	3	6	9	7	4	8	5	10
	2002	11	1	3	2	4	9	6	8	7	9	10
	2003	11	2	4	1	3	9	6	8	7	5	10
	2004	11	2	4	1	3	9	7	8	6	5	10
3.3	2001	3	5	8	1	7	10	2	11	6	4	9
	2002	2	4	8	1	7	10	3	11	6	5	9

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
	2003	2	5	3	1	6	11	4	10	7	8	9
	2004	2	5	3	1	8	10	4	11	6	7	9
3.4	2001	10	3	9	5	1	8	7	2	4	11	6
	2002	7	6	10	2	1	9	8	5	3	11	4
	2003	8	2	9	10	3	6	7	5	4	11	1
	2004	7	2	3	4	9	8	5	6	11	10	1
3.5	2001	11	1	2	5	3	8	7	10	9	4	6
	2002	11	5	4	2	1	8	7	10	9	3	6
	2003	11	2	4	5	1	10	9	8	7	3	6
	2004	11	1	4	6	2	9	8	10	7	3	5
3.6	2001	7	1	4	3	2	6	5	9	11	8	10
	2002	9	4	5	3	1	7	2	10	11	8	6
	2003	9	5	4	2	3	6	8	10	7	11	1
	2004	9	2	6	4	3	5	8	10	7	11	1
3.7	2001	11	3	8	1	6	4	5	10	9	2	7
	2002	11	2	4	1	7	6	5	9	8	3	10
	2003	11	4	2	1	5	6	8	10	9	3	7
	2004	11	5	2	1	8	6	7	10	9	4	3
3.8	2001	3	6	2	1	9	11	10	4	7	5	8
	2002	7	6	5	1	3	11	9	8	2	10	4
	2003	5	3	2	1	8	10	4	9	6	11	7
	2004	4	6	3	2	9	10	1	11	8	7	5

Գրանցված գործազուրկների թվով հանրապետության մարզերի մեջ աչքի են ընկնում հատկապես Սյունիքը, Շիրակն ու Լոռին: Եթե վերջին երկուսի դեպքում դա կարելի է բացատրել 1988թ-ի ավերիչ երկրաշարժի հետևանքով զգալի արտադրական հզորությունների կորստով և աղետի գոտու ոչ լրիվ վերականգնմամբ, ապա Սյունիքի մարզի դեպքում դա այդքան էլ տրամաբանական ու հասկանալի չի թվում:

Առավել ցածր է գործազրկության մակարդակը Արագածոտնի մարզում, որտեղ բնակչության զգալի մասը ներգրավված է գյուղատնտեսության ոլորտում: Ըստ այդմ, ակնհայտ է, որ գործազրկության մակարդակի գնահատման մեթոդաբանության փոփոխության պարագայում (խոսքը, մասնավորապես, գյուղատնտեսությունում զբաղվածներին աշխատանք փնտրողների կազմից դուրս թողնելու մասին է) պատկերը բոլորովին այլ կլինի: Նույնն է նաև Արարատի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում արձանագրված ցածր գործազրկության պատճառը: Իսկ ընդհանուր առմամբ, հանրապետության գրեթե բոլոր մարզերի կտրվածքով դիտարկվող ժամանակահատվածի

ընթացքում նկատելի է գործազրկության մակարդակի նվազման միտումը: Բացառություն են կազմում միայն Լոռին ու Վայոց Ձորը, որտեղ արձանագրվել է ցուցանիշի որոշակի ավելացում:

Տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ կենսաթոշակառուների թիվն առավել բարձր է Երևանում, Տավուշում ու Լոռիում, ինչը այս մարզերում սոցիալական լարվածության լրացուցիչ նախադրյալների առկայության վկայությունն է: Այս տեսանկյունից փոքր-ինչ բարվոք կարելի է համարել Արագածոտնի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում ձևավորված բնակչության սոցիալական կառուցվածքը: Այնուհանդերձ բոլոր մարզերում էլ նկատելի է դիտարկվող հարաբերակցության աճը, ինչը ստիպում է խոսել հասարակության ծերացման միտումների պահպանման մասին: Սա, անկասկած, կարևոր խնդիր է, որի բացասական հետևանքները արդեն իսկ իրենց զգացնել են տալիս:

Հանրապետության մարզերի մեծ մասում դիտարկվող ժամանակահատվածում ավելացել է նպաստառու ընտանիքների թիվը: Այս միտումներից դուրս են մնացել միայն Երևանը, Արարատն ու Արմավիրը, որտեղ նպաստ ստացող ընտանիքների հարաբերական մեծությունը արձանագրել է ամենափոքր արժեքները: Հակադարձ պատկերն է նկատելի Տավուշի, Լոռվա և Շիրակի մարզերում, որոնք դիտարկվող չորս տարիների ընթացքում նպաստառու ընտանիքների թվով ՀՀ մարզերի շարքում գրավել են առաջին երեք տեղերը: Այս հանգամանքը ևս մեկ անգամ փաստում է հիշատակված մարզերում բնակչության ծանր սոցիալական վիճակի մասին:

Աշխատանքային անվտանգության մակարդակը, որը տվյալ պարագայում բնութագրվում է արտադրական գործընթացներում վնասվածք ստացած անձանց տեսակարար կշռով, ամենաբարձրն է Տավուշի, Արագածոտնի և Արարատի մարզերում, իսկ ամենացածրը՝ Գեղարքունիքում, Վայոց Ձորում և Սյունիքում: Սակայն այս արդյունքի հիման վրա եզրակացություններ անելիս պիտի լրացուցիչ զգուշավորություն հանդես բերել, քանի որ եթե դիտարկվող ցուցանիշի արժեքն ամենացածրն է, դա դեռևս չի վկայում տվյալ մարզում արտադրական անվտանգության բարձր մակարդակի ապահովման մասին, այլ պարզապես դրա հիմնական պատճառը կարող է լինել արտադրական գործընթացներում ներգրավված անձանց փոքր թվաքանակը:

Գրանցված քրեական հանցագործությունների թիվը ամենաբարձրն է Երևանում (2.3 հանցագործություն 1000 բնակչի հաշվով), ինչը լիովին տրամաբանական է, եթե հաշվի առնենք Երևանում ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների կենտրոնացման բարձր աստիճանը: Մյուս կողմից, այստեղ, ինչպես և հանրապետության մյուս բոլոր մարզերում, 2001-2004թթ. նկատելի է հանցավորության մակարդակի թեկուզ փոքր, բայց լայնպես նվազման միտումը: Իսկ ընդհանուր առմամբ, քրեական

հանցագործությունների ամենափոքր թիվն արձանագրվել է Արագածոտնում (0.8 հանցագործություն 1000 բնակչի հաշվով), նրան հաջորդում են Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերը:

Տնտեսական հանցագործությունների դեպքում ևս նկատելի է դրանց թվի նվազման միտումը: Այս ցուցանիշով «առաջատարը» Վայոց ձորի մարզն է, որին հաջորդում են Շիրակն ու Երևանը: Առավել քիչ տնտեսական հանցագործություններ գրանցվել են Տավուշում, Արագածոտնում և Գեղարքունիքում:

Ընդհանուր առմամբ, կարելի է նկատել, որ ինչպես տնտեսական, այնպես էլ քրեական հանցագործությունների ցուցանիշով առավել բարվոք վիճակում են գտնվում այն մարզերը, որտեղ գերակշռում են գյուղական համայնքները, որոնք աչքի են ընկնում ֆինանսական, նյութական ու մարդկային ռեսուրսների ցածր կենտրոնացմամբ, ինչպես նաև ավելի ամուր միջանձնային կապերով:

Գիտարկվող ժամանակահատվածում հանրապետության 8 մարզերում արձանագրվել է վարչական իրավախախտումների թվի աճ: Այս ցուցանիշով, ինչպես նախորդ երկու դեպքերում, այս անգամ էլ առավել աչքի է ընկնում Երևանը, որտեղ 1000 բնակչի հաշվով հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը շուրջ 6 անգամ գերազանցում է մյուս 10 մարզերի միջին ցուցանիշը:

Միգրացիայի մնացորդը բոլոր մարզերի կտրվածքով բացասական է: Չնայած վերջին տարիների ընթացքում հանրապետությունից բնակչության արտահոսքի տեմպերի նվազմանը, այնուհանդերձ այն դեռևս շարունակում է մնալ բարձր: Ընդ որում, բնակչության արտահոսքն ավելի բարձր է Գեղարքունիքի, Շիրակի և Լոռվա մարզերից, ինչը ևս մեկ անուղղակի վկայությունն է այս մարզերում բնակչության կյանքի անբարենպաստ պայմանների: Հանրապետության մարզերի շարքում միգրացիայի ցածր տեմպով աչքի է ընկնում Կոտայքի մարզը: 2004-ին այստեղ արձանագրվել է բնակչության արտագաղթի ամենացածր ցուցանիշը, այն դեպքում, երբ 2003-ին մարզը 4-րդն էր, 2002-ին՝ 9-րդը, իսկ 2001-ին զբաղեցնում էր նախավերջին տեղը:

Մարզերի սոցիալական բարեկեցության մակարդակը գնահատող ցուցանիշների համար ստացված կշռային գործակիցները բերված են աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14

Սոցիալական բարեկեցության ցուցանիշների կշռային գործակիցները

	Ցուցանիշը	Կշիռը
3.1	Գործազրկության մակարդակը	0.20
3.2	Թոշակառուների թվի հարաբերակցությունը տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ	0.06
3.3	Նպաստառու ընտանիքների թիվը	0.15

	Ցուցանիշը	Կշիռը
3.4	Աշխատանքային պրոցեսում արտադրական վնասվածք ստացած անձանց թիվը	0.04
3.5	Քրեական հանցագործությունների թիվը	0.16
3.6	Տնտեսական հանցագործությունների թիվը	0.11
3.7	Վարչական իրավախախտումների թիվը	0.13
3.8	Միգրացիայի մնացորդը	0.15

Աղյուսակ 14-ում բերված կշռային գործակիցների հիման վրա հաշվարկվել են մարզերի սոցիալական բարեկեցության մակարդակը գնահատող սինթետիկ ինտեգրալային ցուցանիշի արժեքները (աղյուսակ 15):

Աղյուսակ 15.

***Սոցիալական բարեկեցության ինտեգրալային սինթետիկ ցուցանիշի
գնահատականները***

Մարզեր	2001թ.		2002թ.		2003թ.		2004թ.	
	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը
Երևան	0,504	8	0,481	8	0,551	8	0,550	8
Արագածոտն	0,756	1	0,746	2	0,799	3	0,798	2
Արարատ	0,685	3	0,710	4	0,803	2	0,788	3
Արմավիր	0,743	2	0,795	1	0,818	1	0,808	1
Գեղարքունիք	0,653	4	0,739	3	0,736	4	0,724	5
Լոռի	0,422	10	0,380	10	0,459	10	0,470	10
Կոտայք	0,613	6	0,651	5	0,690	5	0,741	4
Շիրակ	0,358	11	0,312	11	0,386	11	0,351	11
Սյունիք	0,444	9	0,456	9	0,536	9	0,531	9
Վայոց Ձոր	0,652	5	0,556	7	0,552	7	0,676	7
Տավուշ	0,567	7	0,644	6	0,690	6	0,706	6
Պարզ միջինը ըստ 11 մարզերի	0,582		0,588		0,638		0,649	

Հանրապետության մարզերում սոցիալական բարեկեցության մակարդակի միջին գնահատականը դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում որոշակի աճ է

արձանագրել: Նույն միտումներն են նկատվել նաև մարզերի ճնշող մեծամասնությունում, ընդ որում աճի ամենաբարձր տեմպը Տավուշի և Կոտայքի մարզերում է (համապատասխանաբար 24.6 և 20.8%%): Այս առումով բացառություն է հանդիսացել միայն Շիրակի մարզը, որտեղ 2001-2004թթ. ընթացքում բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակը նվազել է, ինչի հիմնական պատճառը բնակչության ծերացման ու միգրացիայի տեմպերի ավելացումն է, ինչպես նաև նպաստառու ընտանիքների թվի աճը: Ի հավելումն այն ամենի, մարզում բարձր է նաև հանցավորության մակարդակը: Այս բոլոր գործոնների գումարային ազդեցության արդյունքը հանրապետության մարզերի վարկանիշային աղյուսակում Շիրակի մարզի զբաղեցրած վերջին տեղն է:

Շիրակի մարզի հետ միասին, բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակով առավել անբարենպաստ իրավիճակում գտնվող մարզերի եռյակի մեջ մտնում են նաև Լոռին և Սյունիքը: Առաջինում խիստ բարձր է գործազրկության և հանցավորության մակարդակը, չափազանց մեծ է նպաստառու ընտանիքների թիվը, ինչպես նաև համեմատաբար բարձր է հասարակության ծերացման ինտենսիվությունը: Ինչ վերաբերում է Սյունիքի մարզին, ապա այստեղ ևս բարձր է գործազրկության մակարդակը, բացի այդ մարզն աչքի է ընկնում արտադրական անվտանգության ցածր մակարդակով և վարչական իրավախախտումների մեծ թվով:

Բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակով առաջին տեղում է Արմավիրի մարզը, ինչը հաջողվել է ապահովել միգրացիայի, տնտեսական ու վարչական իրավախախտումների ցածր մակարդակի, բնակչության երիտասարդացման միտումների ու նաև նպաստառու ընտանիքների թվի նվազեցման արդյունքում:

Երկրորդ Արագածոտնի մարզն է, ինչը, ի հավելումն գրանցված գործազուրկների փոքր թվի (դրա պատճառներին արդեն անդրադարձանք), հետևանք է նաև մարզում քրեական ու տնտեսական հանցավորության ցածր մակարդակի: Համանաման պատճառներ են ընկած նաև Արարատի մարզի բնակչության սոցիալական զարգացման համեմատաբար բարձր մակարդակի հիմքում:

Ինչ վերաբերում է Երևանին, ապա դիտարկվող ցուցանիշով այն 8-րդն է, ինչի հիմնական պատճառը մայրաքաղաքում, մյուս մարզերի համեմատ, հանցավորության բարձր մակարդակն է: Բացի այդ, այստեղ բարձր է նաև վարչական իրավախախտումների թիվը, գործազրկության մակարդակն ու հասարակության ծերացման ինտենսիվությունը:

Բնապահպանական ոլորտը ՀՀ մարզերում

ՀՀ մարզերում բնապահպանական վիճակի գնահատման նպատակով օգտագործվել են հետևյալ 6 ցուցանիշները:

- 4.1. բնապահպանական օրենսդրության հայտնաբերված խախտումների թիվը, 1000 բնակչի հաշվով,**
- 4.2. վերացված բնապահպանական խախտումների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ,**
- 4.3. մթնոլորտային արտանետումներն անշարժ աղբյուրներից (տոննա, 1000 բնակչի հաշվով),**
- 4.4. մթնոլորտային արտանետումները 1քառ. կմ-ի հաշվով (կգ),**
- 4.5. ծծմբային անհիդրիդի արտանետման տեսակարար կշիռն ընդհանուր արտանետումների կառուցվածքում,**
- 4.6. ջրի կորուստը տեղափոխման ժամանակ (տեսակարար կշիռն ընդհանուր ջրառի կառուցվածքում):**

Աղյուսակներ 16 և 17-ում արտացոլված են նշված ցուցանիշների արժեքների դինամիկան ըստ ՀՀ մարզերի և վերջիններիս վարկանիշերը, 2001-2004թթ. ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 16.

***Բնապահպանական ոլորտի ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի
(2001-2004թթ.)***

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
4.1	2001	2,14	5,56	9,67	6,15	2,02	4,02	4,77	4,20	3,67	8,75	9,23
	2002	2,11	2,89	8,31	2,64	2,18	2,56	3,30	4,42	3,47	8,41	10,13
	2003	0,99	3,60	1,61	0,87	1,76	3,13	4,10	1,84	3,98	9,68	16,75
	2004	1,13	5,54	1,21	3,31	1,42	3,52	2,04	2,59	3,14	10,91	11,76
4.2	2001	0,21	0,44	0,01	0,26	0,58	0,66	0,24	0,59	0,43	0,12	0,78
	2002	0,01	0,50	0,01	0,04	0,81	0,37	0,36	0,83	0,91	0,00	0,92
	2003	0,00	0,80	0,32	0,54	0,81	0,66	0,76	0,73	0,41	0,76	0,96
	2004	0,30	0,44	0,55	0,60	0,50	0,69	0,80	0,81	0,29	0,57	0,87
4.3	2001	1,88	0,41	20,73	0,27	0,41	14,89	16,26	0,20	1,04	0,62	0,93
	2002	1,43	0,18	31,62	0,44	1,59	25,31	10,23	0,53	2,30	1,10	0,87
	2003	1,62	1,93	45,34	0,51	1,19	34,54	9,48	1,10	1,92	2,21	1,31
	2004	2,00	1,10	54,80	0,30	0,20	67,60	11,80	1,10	2,20	2,30	0,90
	2001	9158,1	20,8	2688,6	59,2	23,9	1125,1	2122,3	21,3	35,2	15,0	46,0

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
4.4	2001	9158,1	20,8	2688,6	59,2	23,9	1125,1	2122,3	21,3	35,2	15,0	46,0
	2002	6952,0	9,2	4104,7	97,8	92,1	1903,4	1333,5	56,0	78,1	26,6	43,3
	2003	7887,9	97,2	5898,8	113,1	69,4	2593,3	1239,7	116,3	65,2	53,4	65,0
	2004	9581,1	56,0	7134,1	69,6	12,1	5072,7	1540,8	110,9	74,8	56,5	43,2
4.5	2001	0,126	0,000	0,005	0,000	0,068	0,945	0,009	0,044	0,013	0,422	0,081
	2002	0,173	0,000	0,008	0,002	0,021	0,948	0,002	0,002	0,031	0,466	0,107
	2003	0,167	0,079	0,006	0,004	0,000	0,949	0,051	0,001	0,107	0,408	0,069
	2004	0,185	0,013	0,001	0,007	0,061	0,986	0,004	0,000	0,146	0,434	0,032
4.6	2001	0,68	0,04	0,06	0,03	0,31	0,42	0,16	0,26	0,08	0,03	0,20
	2002	0,69	0,05	0,06	0,04	0,38	0,45	0,17	0,27	0,09	0,04	0,22
	2003	0,70	0,11	0,07	0,05	0,74	0,48	0,23	0,34	0,06	0,05	0,26
	2004	0,75	0,39	0,21	0,18	0,32	0,28	0,32	0,21	0,08	0,04	0,03

Աղյուսակ 17.

ՀՀ մարզերի վարկանիշերն ըստ բնապահպանության ոլորտը գնահատող ցուցանիշների (2001-2004թթ.)

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
4.1	2001	2	7	11	8	1	4	6	5	3	9	10
	2002	1	5	9	4	2	3	6	8	7	10	11
	2003	2	7	3	1	4	6	9	5	8	10	11
	2004	1	9	2	7	3	8	4	5	6	10	11
4.2	2001	9	5	11	7	4	2	8	3	6	10	1
	2002	10	5	8	9	4	6	7	3	2	11	1
	2003	11	3	10	8	2	7	4	6	9	5	1
	2004	10	9	7	5	8	4	3	2	11	6	1
4.3	2001	8	4	11	2	3	9	10	1	7	5	6
	2002	6	1	11	2	7	10	9	3	8	5	4
	2003	5	7	11	1	3	10	9	2	6	8	4
	2004	6	5	10	2	1	11	9	4	7	8	3
4.4	2001	10	2	11	7	4	8	9	3	5	1	6
	2002	11	1	10	7	6	9	8	4	5	2	3
	2003	11	5	10	6	4	9	8	7	3	1	2
	2004	11	3	10	5	1	9	8	7	6	4	2
4.5	2001	9	1	3	2	7	11	4	6	5	10	8
	2002	9	1	5	2	6	11	4	3	7	10	8
	2003	9	7	4	3	1	11	5	2	8	10	6
	2004	9	5	2	4	7	11	3	1	8	10	6

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
4.6	2001	11	2	3	1	4	10	7	9	6	5	8
	2002	11	3	4	1	9	10	6	8	5	2	7
	2003	10	5	4	2	11	9	6	8	3	1	7
	2004	11	10	6	4	8	7	9	5	3	2	1

Բնապահպանական օրենսդրության խախտումների ամենամեծ թիվն արձանագրվել է Տավուշի մարզում (11.8 խախտում՝ 1000 բնակչի հաշվով): Նշանակալի է նաև Վայոց Ձորի ցուցանիշը (10.9): Հարկ է նշել, որ դրանք հիմնականում անօրինական անտառահատումների արձանագրված դեպքերն են: Սյուս կողմից, Տավուշի մարզում բարձր է նաև վերացված խախտումների տեսակարար կշիռը (88%): Այս ցուցանիշը բարձր է նաև Կոտայքի և Շիրակի մարզերում: Պիտի արձանագրել, որ բնապահպանական օրենսդրության խախտումների դեմ պայքարն առավել անհաջող է տարվում Երևանում և Սյունիքում: Այստեղ 2004թ.-ին վերացվել է հայտնաբերված բնապահպանական խախտումների համապատասխանաբար 29.6 և 29.2%: Սրա պատճառներից մեկը, բնապահպանական միջոցառումների ոչ պատշաճ մակարդակով կազմակերպման հետ միասին, նաև այն է, որ Երևանում և Սյունիքում արձանագրված բնապահպանական խախտումներն արտադրական բնույթ ունեն, այսինքն դրանց վերացումը կապված է լուրջ ներդրումների, արտադրական գործընթացների լայնամասշտաբ վերազինման հետ, ինչը, պիտի խոստովանել, չի տեղավորվում ընկերությունների ներդրումային քաղաքականության շրջանակներում:

Անշարժ աղբյուրներից կատարվող մթնոլորտային արտանետումները թե բացարձակ և թե հարաբերական առումներով հանրապետության գրեթե բոլոր մարզերում, դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում ավելացել են: Սա, ինչ խոսք, վերջին տարիներին արձանագրվող տնտեսական ակտիվության ավելացման բացասական հետևանքներից է:

Բնապահպանական խնդիրների տեսանկյունից առավել անբարենպաստ վիճակում են գտնվում Արարատի և Լոռվա մարզերը, որտեղ 1000 բնակչի հաշվով մթնոլորտային արտանետումները կազմում են համապատասխանաբար 54.8 և 67.6 տոննա: Մեկ քառ. կմ. տարածքի հաշվով ամենաշատ արտանետումներ կատարվում են Երևանում (9.6 տոննա), Արարատում (7.1 տոննա), Լոռիում (5.1 տոննա) և Կոտայքում (1.5 տոննա): Այս երկու ցուցանիշների կտրվածքով համեմատաբար բարվոք է իրավիճակը Գեղարքունիքի, Արագածոտնի, Արմավիրի և Տավուշի մարզերում:

Մթնոլորտային արտանետումների կառուցվածքում բնակչության կյանքի և առողջության համար առավել վնասակար նյութերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է Լոռվա մարզում: Այսպես, ծծմբային անհիդրիդի տեսակարար կշիռն ընդհանուր արտանետումների ծավալում 2004թ. կազմել է 98.6%, ինչն, ակնհայտորեն, խիստ բացասաբար է անդրադառնում մարզի ընդհանուր բնապահպանական իրավիճակի վրա և հանդիսանում է բնակչության մահացության մակարդակի աճի հիմնական գործոններից մեկը: Այս ցուցանիշով համեմատաբար բարվոք վիճակում են գտնվում Շիրակի, Արարատի և Կոտայքի մարզերը:

Բնապահպանական ոլորտը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից է նաև բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Ըստ այդմ, որպես ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության մասնակի գնահատական մեր կողմից օգտագործվել է տեղափոխման ընթացքում ջրի կորստի տեսակարար կշիռն ընդհանուր ջրառի կառուցվածքում: Ըստ այդմ, դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում մարզերի մեծ մասում նկատելի է ջրի կորստի աճ: Այս տեսանկյունից աչքի է ընկնում հատկապես Երևանը, որտեղ սպառողներին հասնող ջրի ծավալը կազմում է ջրառի միայն 25%-ը, այն դեպքում, երբ մյուս 10 մարզերի միջինը կազմում է մոտ 80%:

Վերը նկարագրված բնապահպանական ցուցանիշների համար հաշվարկված կշռային գործակիցները բերված են աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 18

Բնապահպանական ոլորտը գնահատող ցուցանիշների կշռային գործակիցները

	Ցուցանիշը	Կշիռը
4.1	Բնապահպանական օրենսդրության հայտնաբերված խախտումների թիվը	0.12
4.2	Վերացված բնապահպանական խախտումների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ	0.13
4.3	Մթնոլորտային արտանետումներն անշարժ աղբյուրներից, (հազար բնակչի հաշվով)	0.16
4.4	Մթնոլորտային արտանետումները 1քառ. կմ-ի հաշվով	0.17
4.5	Ծծմբային անհիդրիդի արտանետումը ընդհանուր արտանետումների կառուցվածքում	0.24
4.6	Ջրի կորուստը տեղափոխման ժամանակ	0.18

Աղյուսակ 18-ում բերված կշռային գործակիցների հիման վրա հաշվարկվել են մարզերի բնապահպանական ոլորտի զարգացման մակարդակը գնահատող սինթետիկ ինտեգրալային ցուցանիշի արժեքները (աղյուսակ 19):

Աղյուսակ 19.

Բնապահպանության ինտեգրալային սինթետիկ ցուցանիշի գնահատականները

Մարզեր	2001թ.		2002թ.		2003թ.		2004թ.	
	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը	Արժեքը	Վարկանիշը
Երևան	0,544	11	0,542	10	0,532	10	0,525	10
Արագածոտն	0,883	1	0,908	2	0,903	2	0,799	7
Արարատ	0,700	9	0,661	9	0,685	9	0,642	9
Արմավիր	0,857	3	0,851	5	0,925	1	0,884	3
Գեղարքունիք	0,849	4	0,869	4	0,797	7	0,844	4
Լոռի	0,558	10	0,487	11	0,480	11	0,399	11
Կոտայք	0,760	7	0,813	7	0,839	5	0,839	5
Շիրակ	0,852	5	0,888	3	0,876	3	0,910	1
Սյունիք	0,880	2	0,934	1	0,857	4	0,831	6
Վայոց Ձոր	0,719	8	0,692	8	0,791	8	0,753	8
Տավուշ	0,845	6	0,846	6	0,801	6	0,887	2
Պարզ միջինը ըստ 11 մարզերի	0,768		0,772		0,771		0,756	

Ընդհանուր առմամբ, դիտարկվող ժամանակահատվածում հանրապետությունում նկատվել է բնապահպանական վիճակի վատացում, ինչն ավելի ակնառու կերպով է դրսևորվել հատկապես 2002-2004թթ. ընթացքում:

Բնապահպանության ոլորտի լուրջ ձախողումներ են արձանագրվել հատկապես Լոռվա մարզում: Բնապահպանության սինթետիկ ինտեգրալային ցուցանիշի արժեքը 2001-2004թթ. ընթացքում նվազել է մոտ 28 տոկոսային կետով, այն դեպքում, երբ բոլոր մարզերի միջինը կրճատվել է միայն 1.5 տոկոսային կետով: Լոռվա մարզում անմխիթար բնապահպանական վիճակի ստեղծմանը գլխավորապես նպաստել են մթնոլորտային

արտանետումների կտրուկ աճն ու դրանց կառուցվածքում ծծմբային անհիդրիդի արտանետումների բարձր տեսակարար կշիռը:

Երևանի բնապահպանական ոլորտում առկա իրավիճակը ևս խիստ անբարենպաստ պիտի համարել: Այստեղ խիստ բարձր է 1 քառ. կմ-ի հաշվով մթնոլորտային արտանետումների քանակն ու ջրի կորուստը, ինչպես նաև անբավարար են բնապահպանական խախտումների վերացմանն ուղղված միջոցառումները:

Բնապահպանական ոլորտի ամենացածր գնահատական ստացած մարզերի եռյակում է նաև Արարատի մարզը: Այստեղ ևս նկատելի է բնապահպանական վիճակի վատթարացում, ինչն առաջին հերթին հետևանք է անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների ծավալի նշանակալի ավելացման:

Դիտարկվող ցուցանիշով համեմատաբար բարվոք վիճակում են գտնվում Շիրակի, Տավուշի, Արմավիրի, Կոտայքի մարզերը:

Ամփոփում

Այսպիսով, ներկայացվեցին ՀՀ մարզերի բնակչության կենսամակարդակը պայմանավորող չորս կարևորագույն ոլորտներում առկա վիճակը բնութագրող ցուցանիշների ամփոփ գնահատականները: Ստորև բերված աղյուսակում մարզերը դասակարգվել են ըստ առանձին չափանիշների համար ստացված գնահատականների:

Աղյուսակ 20

ՀՀ մարզերի դասակարգումն ըստ առանձին ոլորտների գնահատականների (2004թ.)

	Բնակչության որակ	Տնտեսական բարեկեցություն	Սոցիալական բարեկեցություն	Բնապահպանություն
1	Գեղարքունիք	Երևան	Արմավիր	Շիրակ
2	Կոտայք	Սյունիք	Արագածոտն	Տավուշ
3	Արմավիր	Կոտայք	Արարատ	Արմավիր
4	Արարատ	Վայոց Ձոր	Կոտայք	Գեղարքունիք
5	Վայոց Ձոր	Լոռի	Գեղարքունիք	Կոտայք
6	Երևան	Արարատ	Տավուշ	Սյունիք
7	Արագածոտն	Արագածոտն	Վայոց Ձոր	Արագածոտն
8	Սյունիք	Տավուշ	Երևան	Վայոց Ձոր
9	Շիրակ	Արմավիր	Սյունիք	Արարատ
10	Տավուշ	Շիրակ	Լոռի	Երևան
11	Լոռի	Գեղարքունիք	Շիրակ	Լոռի

Ստացվել է բավականաչափ խայտաբղետ մի պատկեր: ՀՀ մարզերի մեջ չկան ակնհայտ առաջատարներ կամ հետնապահներ: Մի ոլորտում լուրջ հաջողություններ արձանագրած մարզը մեկ ուրիշ ոլորտում հայտնվում է վերջին տեղերից մեկում: Օրինակ, Գեղարքունիքում բարձր է բնակչության որակը, սակայն տնտեսական բարեկեցության մակարդակը խիստ ցածր է: Երևանը բոլորին գերազանցում է տնտեսական զարգացման մակարդակով, սակայն զիջում է բնապահպանական և սոցիալական ոլորտներում: Հետաքրքրական է այն, որ տնտեսական բարեկեցության մակարդակով վերջին եռյակում հայտնված մարզերը բնապահպանական ոլորտի գնահատականով առաջին եռյակում են: Անուղղակիորեն ստացվում է, որ տնտեսական զարգացման գինը բնության աղտոտումն է: Ցավոք մեզանում բնապահպանական խնդիրները ստորադասվում են տնտեսականին, բնապահպանությունը չի դիտվում որպես բնակչության կենսամակարդակը պայմանավորող առանցքային գործոն, ինչը վկայում է հասարական ինքնագիտակցության ոչ բավարար զարգացման մասին:

Ստացված արդյունքները թույլ են տալիս նաև պնդելու, որ բնակչության բարեկեցությունը միարժեքորեն չի պայմանավորվում տնտեսական բարեկեցությամբ: Տնտեսական բարեկեցության աճը հանդիսանում է ընդհանուր բարեկեցության մակարդակի բարձրացման, բնակչության կյանքի որակի բարելավման ուղղություններից մեկը միայն: Կյանքի որակն ավելի ընդգրկում է հասկացություն է, այն ունի համակարգային բնույթ, որտեղ բոլոր տարրերը փոխկապված են և պայմանավորում են միմյանց գոյությունն ու զարգացումը: Եվ հետևաբար բնակչության բարեկեցության աճ կարող է տեղի ունենալ միայն համակարգի առանցքային բաղադրատարրերի զարգացման արդյունքում:

Այս համատեքստում, արված վերլուծության արդյունքները պատասխան են տալիս այն հիմնական հարցին, թե ո՞ր մարզը բարեկեցության ո՞ր ենթահամակարգի, ո՞ր բաղադրիչի զարգացման նախադրյալներ պիտի ստեղծի՝ բնակչության բարեկեցության իրական աճ ապահովելու համար:

Այսպես, օրինակ, Երևանում լուրջ ուշադրություն պիտի դարձնել բնապահպանական հիմնախնդիրների կարգավորմանը, ինչպես նաև սոցիալական բարեկեցության ցածր մակարդակի պատճառ հանդիսացող ոլորտներում առկա իրավիճակի բարելավմանը:

Բնապահպանական խնդիրներն առանձնահատուկ ուշադրություն են պահանջում նաև Արարատի, Վայոց Ձորի մարզերում ու հատկապես՝ Լոռիում, որտեղ սուր են դրված նաև բնակչության որակի ու սոցիալական բարեկեցության բարելավման խնդիրները: Ասվածը որոշակիորեն վերաբերում է նաև Շիրակի մարզին: Այստեղ, հանրապետության մյուս մարզերի համեմատությամբ, ցածր է տնտեսական ու սոցիալական բարեկեցության մակարդակը և բնակչության որակը, ինչը, արդեն նշեցինք, 1988թ. աղետալի երկրաշարժի կործանարար հետևանքների ոչ լրիվ վերացման արդյունքն է, և ինքնըստինքյան հասկանալի է, որ այստեղ առկա խնդիրների լուծումը կարող է դիտարկվել միայն տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրի շրջանակներում:

Հանրապետության առավել պրոբլեմային մարզերից են նաև Տավուշը, որտեղ լուրջ խնդիրներ կան բնակչության որակի բարելավման ոլորտում, ինչպես նաև՝ Գեղարքունիքի և Արմավիրի մարզերը, որտեղ լուրջ ուշադրություն պիտի դարձնել հատկապես տնտեսական բարեկեցության բարձրացման խնդիրների լուծմանը:

Վերջաբան

Ինքնըստիներյան հասկանալի է, որ ստացված արդյունքներն ու արված եզրահագումները չեն կարող դիտարկվել առանձին-առանձին՝ ըստ յուրաքանչյուր մարզի: Դրանց լուծումը չի ենթադրում այս կամ այն մարզի համար մի որոշակի՝ առավել թերի ոլորտի զարգացման ծրագրի մշակում և կենսագործում: Բոլորս էլ հասկանում ենք, որ բացահայտված խնդիրների լուծումն առաջին հերթին պահանջում է հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համընդգրկուն և իրատեսական ռազմավարության մշակում, որում հաշվի կառնվեն երկրում առկա բոլոր ներուժային հնարավորությունները: Այս տեսանկյունից, մեր կողմից իրականացված աշխատանքի կիրառելիությունը մենք տեսնում ենք նրանում, որ առաջադրված մոտեցումները և դրանց հիման վրա ստացված արդյունքները (որոնք, բնականաբար, հետագայում կարող են ենթարկվել փոփոխությունների և ճշգրտումների) հնարավորություն կընձեռնեն այդպիսի ռազմավարությունը դարձնել ավելի իրատեսական, այն մշակել ոչ թե համահարթեցման սկզբունքով, ինչպես շատ հաճախ արվում է ներկայումս, այլ դարձնել հնարավորինս նպատակային՝ ելնելով յուրաքանչյուր մարզի, տարածաշրջանի առավելություններից ու կենսական խնդիրներից, ինչը դիտարկվող ոլորտներում պետական քաղաքականության արդյունավետության բարձրացումը պայմանավորող առանցքային սկզբունքներից է:

Վերջում, ամփոփելով, կցանկանայինք ևս մեկ անգամ մատնանշել, որ ներկայացվող վերլուծության հիմնական առաքելությունը, մեր կարծիքով, հանրապետության մարզերում առկա իրավիճակի ներկայացումն է փոքր-ինչ այլ պրիզմայով, որից այն կողմ կարելի է տեսնել այն խնդիրները, որոնք դուրս են իրականության մասին մեր պատկերացումներից և սովորական, համընդհանուր ճանաչում ունեցող մոտեցումների կիրառման պարագայում շատ հաճախ տեսանելի չեն: